«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԱՎԻԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԱՈՒԿ կամ Կենտրոն) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է Կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....13

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....13

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....16

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....16

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....18

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 23

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....27

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....31

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....35

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....37

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....41

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 43

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 46

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 50

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 51

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ...51

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....59

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 61

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

Հայաստանում Քաղաքացիական ավիացիան ձևավորվել է 1933 թվականին: 1961 թվականին ստեղծվել է ուսումնավարժական էսկադրիլիան, որը մի շարք անվանափոխումներից հետո 1993 թ. ստացել է իր ներկայիս անվանումը՝ «Ավիաուսումնական կենտրոն», իսկ 2001 թ. ստացել է ներկա կազմակերպաիրավական ձևը՝ ՓԲԸ:

Կենտրոնը գտնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Ավիաուսումնական կենտրոնը միակ հաստատությունն է Հայաստանի Հանրապետությունում, որն իրականացնում է կրթական ծրագրեր քաղաքացիական ավիացիայի հիմնական մասնագիտությունների գծով միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման, ինչպես նաև ավիացիոն գործող մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման ուղղությամբ:

Ավիաուսումնական կենտրոնն իրականացնում է միջին մասնագիտական երեք կրթական ծրագիր՝ «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում օդային տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում»:

Ավիատեխնիկների ուսման տևողությունը 3 տարի է, իսկ օդային երթևեկության կառավարման կարգավարների և օդային փոխադրումների կազմակերպման բաժիններում՝ 2.5 տարի:

Կենտրոնում կրթություն է ստանում 142 ուսանող:

Կենտրոնում աշխատում են 24 դասախոս, որոնցից 21-ը ունեն բարձրագույն կրթություն, այդ թվում՝ մեկը գիտության թեկնածու, իսկ 3-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Կենտրոնի 5 դասախոս գործատուներ են:

Կենտրոնը շրջանավարտների մասնագիտական հետագծի վերաբերյալ հավաքագրված տվյալներ ու ձևավորված բազա չունի: Շրջանավարտների համար պոտենցիալ գործատուներն են.

- «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների կառավարիչ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ,
- «Հայաստանի աերոնավիգացիոն ծառայություն» ՓԲԸ,

- «Դիլիջանս ավիաընկերություն» ՍՊԸ,
- «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ ավիաընկերությունը,
- «Քրոս տեխնիկս» ավիաընկերությունը,
- «Ազիմուտ» ավիաընկերությունը,
- «Կարգո» ընկերությունը։

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Ավիառուսումնական կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Կենտրոնն առաջին անգամն է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Կենտրոնը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի ստեղծման նպատակն է՝ «Տնտեսական գործունեություն (այդ թվում՝ միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացման ծառայություններ) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը»: Կանոնադրության համաձայն՝ «Կենտրոնն ապահովում է կրթական ծառայությունների մատուցումը, որակյալ մասնագետների պատրաստումը՝ համաձայն ազգային և միջազգային պահանջների»:

Կենտրոնը որպես երկարաժամկետ պլանավորում մշակում է եռամյա գործարար ծրագրեր համագործակցող գործատուների և Քաղավիացիայի կոմիտեի հետ քննարկումների արդյունքում և դրանք պարբերաբար վերանայում է ոլորտային պահանջների փոփոխություններին համահունչ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ռազմավարական ծրագրի մշակումը հնարավորություն կտա Կենտրոնին երկարաժամկետ հեռանկարում ձևավորել իր ռազմավարական առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները և դրանց իրականացման համար մշակել հստակ պլան-ժամանակացույց:

Տնօրենի հաշվետվությունների կիրառվող ձևաչափը, եթե կապվի ռազմավարական զարգացման ուղղությունների հետ և ներառի կրթական գործընթացի, ձեռքբերումների և թերացումների վերաբերյալ բովանդակային վերլուծություններ, ապա հնարավորություն կտա համընդհանուր պատկեր կազմել Կենտրոնի զարգացման վերաբերյալ և ապահովել առավել հիմնավորված կառավարչական որոշումներ:

Կենտրոնի դասախոսական և ուսանողական կազմի ներգրավումը կառավարման մարմիններում և համապատասխան կանոնակարգերով նման հնարավորությունների սահմանումը կապահովի դասախոսների և ուսանողների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Վերջինս կնպաստի կրթական գործընթացների արդյունավետության բարձրացմանը և շահակիցների ներգրավման մակարդակի աճին:

Կենտրոնի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրությունը, եթե իրականացվի համակարգված և ներառի մշակված գործիքակազմ ներքին և արտաքին գործոնների և ռիսկերի վերհանման համար, ապա կհանգեցնի

հիմնավորված պլանավորման, ռիսկերի կանխատեսման և փոփոխվող միջավայրին արագ արձագանքելու հնարավորություն։

Կենտրոնը կարողացել է ձևավորել ավիաընկերությունների հետ արդյունավետ համագործակցություն, որի հիման վրա իրականացնում է նոր կրթական ծրագրերի և կարճաժամկետ դասընթացների ներդնում՝ նպաստելով արդիական մասնագետների պատրաստմանը, մասնագիտական հմտությունների բարելավմանը և որակավորումների բարձրացման դասընթացների շարունակական արդիականացմանը։

Կենտրոնում կառավարչական որոշումներն ընդհանուր առմամբ միտված են կրթական ծրագրերի բարելավմանը և որակավորումների արժանահավատ շնորհմանը, սակայն բացակայում են տեղեկատվության հավաքագրման և դրանց գնահատման կայուն մեխանիզմները, ինչը կարող է ստեղծել անհրաժեշտ հիմքեր կառավարչական հիմնավորված որոշումների կայացման համար։

Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով 2024թ.-ին Կենտրոնն իրականացրել է համապատասխան փաստաթղթային բազայի մշակումը, այդ թվում՝ Որակի ձեռնարկի կազմումը, որը անհրաժեշտ հիմքեր է ստեղծում որակի համակարգի ձևավորման համար։ Սակայն որակի քաղաքականությամբ սահմանված նպատակների ուղղությամբ կատարված աշխատանքները դեռևս շոշափելի արդյունքներ չեն գրանցել։

Որակի ապահովման համակարգը Կենտրոնում նոր է ձևավորվում։ Գործընթացները գտնվում են պլանավորման և մասամբ իրականացման փուլերում։ Կենտրոնի ղեկավար կազմը կարևորում է որակի ապահովման դերը և դրա զարգացումը, սակայն որակի կառավարչի պլանավորած աշխատանքները կենտրոնանում են հիմնականում ուսումնական գործընթացի ստուգումների, վերստուգումների և աշխատանքների վերահսկման վրա։ Արդյունքում պակաս են կարևորվում բոլոր շահակիցների կարիքների վերհանումն ու որակական տվյալների հավաքագրումը, ինչը հիմք պետք է հանդիսանար բարելավման գործընթացների համար։

Կենտրոնի կրթական ծրագրերը համահունչ են նրա առաքելությանը և աշխատաշուկայի պահանջներին։ Նոր կրթական ծրագրերի մշակումն աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրության հիման վրա ապահովում է շրջանավարտների մրցունակությունը։ Կենտրոնն առաջնորդվում է ICAO-ի (International Civil Aviation Organization՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն, այսուհետ՝ ICAO) և EASA-ի (European Union Aviation Safety Agency՝ Եվրոպական Միության ավիացիոն անվտանգության գործակալություն, այսուհետ՝ EASA) ստանդարտներով, ինչը նպաստում է կրթական ծրագրերի միջազգային պահանջներին համապատասխանության ապահովմանը։

Մոդուլային ծրագրերում սահմանված է ուսումնառության արդյունքների գնահատման ձևաչափը, սակայն պրակտիկայի համար չափանիշներ չեն նախատեսվել, ինչը դժվարացնում է ուսանողների գործնական պատրաստվածության համապարփակ գնահատումը։ Պետական ամփոփիչ ատեստավորումը դեռևս ամբողջապես չի ներառում մասնագիտական ծրագրերի վերջնարդյունքների ստուգումը, բայց նախատեսվում է անցում կատարել համալիր քննությունների՝ գործնական հմտությունների ընդգրկմամբ։

Ուսանողները կատարում են ռեֆերատներ և կուրսային աշխատանքներ, սակայն դրանք հիմնականում տեսական բնույթ ունեն և հետազոտական տարրեր չեն պարունակում: Ուսումնառության գործընթացում հետազոտական բաղադրիչի զարգացումը կնպաստի ուսանողների վերլուծական հմտությունների ձևավորմանը և ոլորտային գիտելիքների խորացմանը:

Կենտրոնը, իր եզակի և պրոֆիլային բնույթը հաշվի առնելով, դասախոսական կազմի համալրման համար ներգրավում է պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետների և ոլորտի գործատուների: Գործատուների ներգրավմամբ Կենտրոնն ապահովում է ոլորտին ծանոթ բարձրակարգ մասնագետների համալրումը, ինչը նպաստում է ուսանողների կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը և մասնագիտական պատրաստվածությանը:

Կենտրոնի տեղակայումը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ստեղծում է համագործակցության եզակի հնարավորություններ ոլորտի գործընկեր կազմակերպությունների հետ: Այս դիրքը հնարավորություն է տալիս ուսանողներին մասնակցել ճանաչողական շրջայցերին, պրակտիկաներին և գործնական պարապմունքներին՝ օգտագործելով իրական աշխատանքային միջավայրի ռեսուրսները: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործնական առաջադրանքների իրականացման համար ժամանակակից համակարգչային ծրագրերի և վիրտուալ փորձարկման գործիքների ներդրումը հնարավորություն կտա հաղթահարել ռեսուրսների պակասը և ուսանողներին ապահովել գործնական հմտությունների զարգացման առավել արդիական և արդյունավետ մեթոդներով: Այս միջոցների կիրառումը կնպաստի նաև ուսանողների տեխնոլոգիական հմտությունների բարելավմանը և ուսուցման գործընթացի նորարարական կազմակերպմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնն անհրաժեշտություն ունի կրթական կարիքների վերհանման համար ուսանողների շրջանում հարցումները դարձնելու պարբերական և համակարգված, ինչպես նաև ընդլայնելու դրանք՝ ընդգրկելով այլ շահակիցներ, ինչը հնարավորություն կտա ստանալ ավելի ամբողջական պատկեր ուսումնական գործընթացի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ: Սա կնպաստի բարելավումների նպատակային և արդյունավետ իրականացմանը:

Կարևոր է, որ Կենտրոնը ներդնի նաև շրջանավարտների մասնագիտական հետագծի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմներ, ինչը հնարավորություն կտա գնահատելու կրթական ծրագրերի արդյունավետությունը, ուժեղացնելու գործատուների հետ համագործակցությունը և աջակցելու շրջանավարտների կարիերայի հետագա զարգացմանը՝ բարելավելով նրանց աշխատանքային հնարավորությունները:

Հետազոտական աշխատանքների իրականացումը Կենտրոնի ռազմավարական առաջնահերթություններից չի համարվում: Կենտրոնում խզված է ուսումնառության և հետազոտական գործունեության միջև կապը: Այս ուղղություններով դեռևս շոշափելի քայլեր չեն իրականացվել: Կենտրոնի կողմից չեն սահմանվել վերլուծական-հետազոտական աշխատանքների իրականացման մեթոդական ցուցումներ կամ անհատական աշխատանքների ներկայացման կարգ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ եթե Կենտրոնը զարգացնի հաշվետվողականության համակարգը՝ ներառելով գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ապա այն թույլ կտա հասարակության համար ապահովել Կենտրոնի գործունեության առավել թափանցիկ և ամբողջական պատկեր: Արդյունքում կբարձրանա Կենտրոնի նկատմամբ վստահությունը, ինչը կնպաստի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների ներգրավման մակարդակի աճին:

Նկատելի են Կենտրոնի գործադրած ջանքերն ու իրականացրած քայլերը հասարակությանը հավելյալ գիտելիքների (արժեքների) փոխանցման ուղղությամբ: Վերջինս կարևորվում է նաև այն հանգամանքով, որ, լինելով ոլորտում եզակի ուսումնական հաստատություն, Կենտրոնը ստանձնել է հանձնառություն ոլորտային վերապատրաստումների և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման համար:

Կենտրոնն իրականացրել է որոշակի քայլեր արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ, ինչի արդյունքում հաստատվել են ոլորտի գործատուների հետ սերտ համագործակցություններ: Այս գործընթացների կանոնակարգումը, ակնկալվող արդյունքների հստակեցումը կարող է նպաստել համագործակցությունների արդյունավետության բարձրացմանը ու կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը: Միջազգայնացման ուղղությամբ Կենտրոնն իրականացնում է կրթական ծրագրերի բարելավում ICAO-ի, EASA-ի պահանջների հիման վրա: Համաձայն ICAO, EASA և IATA միջազգային ավիացիոն կազմակերպությունների պահանջների՝ Կենտրոնի համապատասխան մասնագետները մշակում և իրականացնում են ավիացիոն մասնագետների վերապատրաստման, որակավորման բարձրացման ծրագրեր:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Գործարար ծրագրերի մշակումը համագործակցող գործատուների և Քաղավիացիայի կոմիտեի հետ քննարկումների արդյունքում և դրանց պարբերաբար վերանայումը ոլորտային պահանջների փոփոխություններին համահունչ,
2. Ներքին հաշվետվողականության գործող համակարգը,
3. Աշխատաշուկայի և ոլորտի կարիքներին համապատասխան ՄԿԾ-ների և որակավորման բարձրացման դասընթացների առկայությունը և դրանց պարբերաբար վերանայումները,
4. Ուսանողական համակազմի հավաքագրման մեխանիզմների ընդլայնմամբ ուսանողների ընդունելության թվի աճը և կայուն համակազմի ձևավորումը,
5. Գործնական հմտությունների ձևավորման համար պրակտիկ ոլորտից դասախոսական կազմի ներգրավումը,
6. Ռեսուրսների բացը լրացնելու նպատակով գործատու կազմակերպությունների բազայում գործնական, պրակտիկ հմտությունների զարգացումը,

7. Հասարակությանը և ոլորտային կազմակերպություններին գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումների իրականացումը։

Հաստատության թույլ կողմերն են.

1. Կենտրոնի ռազմավարական զարգացման ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, և դրանց իրականացման համար պլան–ժամանակացույցը ներառող երկարաժամկետ ռազմավարության և դրան համապատասխան վերլուծական հիմքով հաշվետվությունների մեխանիզմի պակասը,
2. Շահակիցների ներգրավմամբ կոլեգիալ կառավարման մարմինների բացակայությունը,
3. Կենտրոնի գործունեության բոլոր ոլորտների ընդգրկմամբ տվյալների հավաքագրման և կարիքների վերհանման կայուն մեխանիզմների բացակայությունը,
4. Կրթական ծրագրերի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմների անկատարությունը և միջազգային այլ համանման կրթական ծրագրերի հետ համեմատական վերլուծությունների պակասը,
5. Կենտրոնում գործող գնահատման համակարգի և վերջնարդյունքների միջև թույլ կապը՝ առավելապես գործնական և պրակտիկ հմտությունների գնահատման մասով,
6. Դասախոսական կազմի կայունության խնդիրները և երիտասարդացմանն ուղղված մեխանիզմների պակասը՝ պայմանավորված ոլորտային փորձառու մասնագետների փոխարինման հարցերով,
7. Հետազոտության իրականացման ու խրախուսման մեխանիզմների բացակայությունը,
8. Ուսանողների կարիերային նպաստող աշխատանքների անկատարությունը, շրջանավարտների հետագծի վերաբերյալ տվյալների հավաքագրման բացը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Մշակել երկարաժամկետ ռազմավարություն՝ սահմանելով Կենտրոնի ռազմավարական զարգացման ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, և դրանց իրականացման համար պլան–ժամանակացույց, որը կներառի անհրաժեշտ միջոցառումներ, ժամկետներ, պատասխանատուներ, ԳԱՑ–եր։
2. Կառավարման գործընթացներում շահակիցների ներգրավման նպատակով ձևավորել կոլեգիալ կառավարման մարմին՝ ներգրավելով գործատուներ, դասախոսներ և ուսանողներ։
3. Կառավարչական որոշումների կայացման համար ստեղծել և ներդնել տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմներ, հավաքագրել տվյալների բազա Կենտրոնի գործունեության բոլոր ոլորտների ընդգրկմամբ։

4. Ստորաբաժանումների կարճաժամկետ պլանները փոխկապակցել երկարաժամկետ զարգացման պլաններին և ներդնել վերլուծական հենքով հաշվետվությունների մեխանիզմ։
5. Վերանայել որակի ապահովման գործառույթները՝ շեշտը դնելով կարիքների վերհանման և բարելավմանը միտված միջոցառումների վրա։
6. Ներդնել շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ, իրականացնել որակական ու քանակական հետազոտություններ՝ ընդգրկելով բոլոր շահակիցներին, և ապահովել դրանց արդյունքների հասանելիությունը։

Որակավորումների արժանահավատ շնորհում

7. Սահմանել ՄԿԾ պատասխանատուների գործառույթներ, որոնք կիրականացնեն կրթական ծրագրերի վերաբերյալ տվյալների հավաքագրում և վերլուծության հիման վրա շարունակական բարելավում։
8. Համակարգել միջազգային չափանիշների համադրման ու այլ համանման կրթական ծրագրերի հետ համեմատության և լավագույն փորձի տեղայնացման մեխանիզմները։
9. Մշակել ուսանողների համար մասնագիտական հանձնարարականների փաթեթ, որը թույլ կտա հետևել ուսանողի ուսումնառության հետագծին։
10. Հստակեցնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մեխանիզմները՝ ուսումնական գործընթացում շեշտադրելով գործնական առաջադրանքները։
11. Սահմանել հստակ գնահատման չափանիշներ Կենտրոնում կիրառվող բոլոր տեսակի գնահատումների համար՝ ապահովելով հետադարձ կապ։
12. Քայլեր ձեռնարկել դասախոսական կազմի երիտասարդացման ու սերնդափոխության ապահովման ուղղությամբ։
13. Հստակեցնել մասնագիտական գործունեության ոլորտում հետազոտության իրականացման ձևերը և ներդնել դասախոսների, ուսանողների կողմից հետազոտության իրականացման ու խրախուսման մեխանիզմներ։
14. Քայլեր ձեռնարկել ուսումնական միջավայրի շարունակաբար բարելավման ուղղությամբ, ինչպես նաև կիրառել վիրտուալ լաբորատորիաներ և ծրագրեր՝ արդիական ռեսուրսների բացը լրացնելու, ուսանողների կարողությունները զարգացնելու համար։

Երկարաժամկետ զարգացում

15. Ակտիվացնել Ուսանողական խորհրդի գործունեությունը՝ կազմելով միջոցառումների պլան, որը կներառի ուսանողների իրավունքների պաշտպանության ու կարիքների վերհանման ուղղությամբ աշխատանքներ։
16. Բարելավել ուսանողների կարիերային նպաստող աշխատանքները, հավաքագրել տվյալներ շրջանավարտների հետագծի վերաբերյալ և պարբերաբար թարմացնել բազան։
17. Սեփական ռեսուրսների կիրառմամբ և պրակտիկայի շրջանակում ուսանողներին տրամադրել հետազոտական բնույթի առաջադրանքներ՝ ապահովելով ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներին։

18. Ներդնել Կենտրոնի գործունեության և կրթական ծրագրերի վերաբերյալ բովանդակային հաշվետվության մեխանիզմ՝ ապահովելով արտաքին հաշվետվողականությունը և կապը զորգացման ռազմավարական ծրագրերի հետ։
19. Համալրել կայքը՝ ապահովելով ամբողջական տեղեկատվություն Կենտրոնի գործունեության, կրթական ծրագրերի վերաբերյալ։
20. Արտաքին կապերի ու միջազգային համագործակցությունների զարգացման համար մշակել պլաններ ու սահմանել գործընթացների գնահատման չափելի ցուցիչներ։
21. Համագործակցություն հաստատել համանման միջազգային կրթական հաստատությունների հետ՝ կրթական ծրագրերի համեմատական վերլուծության և լավագույն միջազգային փորձի տեղայնացման համար։

_____

Գագիկ Քթրյան
Փորձագիտական խմբի ղեկավար

20-ը փետրվարի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Գագիկ Քթրյան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի որակի ապահովման բաժնի ղեկավար, փորձագիտական խմբի ղեկավար:

Օլեգ Գևորգյան՝ տեխնիկակական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:

Գայանե Համբարձումյան՝ Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, փորձագիտական խմբի անդամ:

Զարուհի Հակոբյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Ավիաուսումնական կենտրոնը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Ավիաուսումնական կենտրոնի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջներին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Ավիառուսումնական կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է ՈԱԱԿ 2024 թվականի սեպտեմբերի 26-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության ղեկավար կազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2024թ. նոյեմբերի 19-ին հանդիպում է տեղի ունեցել Կենտրոնի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում Կենտրոնի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024 թվականի դեկտեմբերի 4-ից 6-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Կենտրոնի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում[2] ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3], դասալսումներ և ռեսուրսերի դիտարկում[4]: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել երեք կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Նախնական զեկույցը փորձագիտական խմբի հաստատումից հետո 2025 թվականի փետրվարի 10-ին տրամադրվել է Կենտրոնին:

Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ Կենտրոնն իր համաձայնությունը ներկայացրել է 2025 թվականի փետրվարի 18-ին:



Մերի Բաբսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

20-ը փետրվարի, 2025 թ.

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց
[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ
[4] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Ավիառուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Կենտրոն) առաքելությունը ձևակերպված է 2024-2026թթ. զարգացման գործարար ծրագրում (այսուհետև՝ ԳԾ): Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ռազմավարական ծրագրի փոխարեն հաստատված ձևաչափով գործարար ծրագրի մշակումը Կենտրոնը պայմանավորում է իր գործունեության առանձնահատկություններով և ՓԲԸ Ընդհանուր ժողովի համար ընդունելի պահանջով: Կանոնադրության համաձայն՝ «Կենտրոնն ապահովում է կրթական ծառայությունների մատուցումը, որակյալ մասնագետների պատրաստումը՝ համաձայն ազգային և միջազգային պահանջների»: Կենտրոնը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Գործարար ծրագրով ներկայացված են Կենտրոնի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, եռամյա ծրագրի արդյունքում ակնկալվող արդյունքները և զարգացման հեռանկարները, նախատեսվող միջոցառումները եռամյա ծրագրի ընթացքում:

Ըստ ԻՎ-ի և փորձագիտական հանդիպումների՝ Կենտրոնի հիմնական նպատակներն են որակյալ կրթություն, հանրային ներգրավում և ծառայությունների մատուցում, որակյալ մարդկային ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, ֆինանսական կայունություն և արդյունավետ կառավարում, տարածաշրջանային և միջազգային համագործակցության ընդլայնում: Այսուհանդերձ, այդ նպատակները, կամ այլ ռազմավարական նպատակներ ԳԾ-ում ամրագրված չեն: Ռազմավարական երկարաժամկետ նպատակներ, դրանցից բխող խնդիրներ, նպատակի իրագործումից ակնկալվող բովանդակային արդյունքներ և արդյունքների գնահատման չափանիշներ չեն սահմանվել:

ԳԾ-ին կից կազմվել է պլան-ժամանակացույց, որը նկարագրում է «Նախատեսվող միջոցառումները եռամյա ծրագրի ընթացքում»: Պլանում նշված են միջոցառման անվանումը, կատարման ժամկետները, միջոցառման վրա կատարվելիք ծախսերը, միջոցառման բնութագիրը, ակնկալվող արդյունքը, որը ներկայացնում է թիվ (դրամական շահույթ): Պլանում նկարագրված չեն միջոցառումների իրականացման պատասխանատուներ և ԳԱՑ-եր:

Կենտրոնի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, իսկ արտաքին շահակիցները՝ ավիաընկերությունները և օդանավակայանները: ԳԾ-ն մշակելիս կարիքների վերհանում իրականացվել է անձնակազմի, համագործակցող գործատուների և Քաղավիացիայի կոմիտեի հետ քննարկումների

արդյունքում: Ավելին, եռամյա ԳԾ-ն ամեն տարի կարող է վերանայվել՝ պայմանավորված Քաղավիացիայի կոմիտեի կողմից ոլորտային պահանջների փոփոխություններով: Այսպես, օրինակ փոփոխություններ են տեղի ունեցել վերջին 3 տարիներին: Մասնավորապես, 2023թ.–ի ծրագրում նախատեսվող միջոցառումներից՝ բորտուղեկցորդուհիների վերապատրաստման դասընթացների, սիրողական օդաչուների տեսական և թռիչքային պատրաստման, ԻԼ–76 թռիչքային անձնակազմի վերապատրաստման ծրագրերի փոխարեն նոր 2024թ.–ի ԳԾ–ում ավելացվել են Անօդաչու թռչող սարքերի և տեխնիկական շահագործում նախնական դասընթաց, Ավիացիոն տեխսպասարկման անձնակազմի համար EASA PART CAMO դասընթացներ, Միջին մասնագիտական կրթության Թռչող ապարատների ավիացիոն և ռադիոէլեկտրոնային սարքավորումների տեխնիկական շահագործում ծրագիրը, Լոգիստիկայի դասընթաց ավիամասնագետների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են Կենտրոնի զարգացման ուղղությունները:

Որպես ԳԾ գնահատման մեխանիզմներ Կենտրոնում դիտարկվում են հաշվետվությունները: Կենտրոնի տնօրենի հաշվետվությունները ներկայացվում են Ընդհանուր ժողովին: Դրանք փոխկապակցված են ԳԾ պլանավորված միջոցառումների հետ, և ներառում են ԳԾ ակնկալվող արդյունքներին համապատասխան ֆինանսական ցուցանիշներ և ծրագրերում ներառված ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ: Տնօրենը չի ներկայացնում կրթական գործունեության վերավերյալ հաշվետվություններ Ընդհանուր ժողովին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կենտրոնի կողմից եռամյա գործարար ծրագրերի մշակումը համագործակցող գործատուների և Քաղավիացիայի կոմիտեի հետ քննարկումների արդյունքում և դրանց պարբերաբար վերանայումը ոլորտային պահանջների փոփոխություններին համահունչ: Փորձագիտական խումբը գտնում է, որ հնգամյա ռազմավարական ծրագրերի մշակումը հնարավորություն կտա Կենտրոնին երկարաժամկետ հեռանկարում ձևավորել իր ռազմավարական առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները և դրանց իրականացման համար մշակել հստակ պլան-ժամանակացույց:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կենտրոնի անձնակազմի կողմից որդեգրված առաքելության և հիմնական զարգացման ուղղությունների գիտակցումը: Միաժամանակ նշում է, որ այդ ուղղությունները ռազմավարական նպատակների և գործողությունների պլանների վերածելը կարևոր է՝ դրանց արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գործարար ծրագրերում որպես ակնկալվող արդյունքներ ներառելով ոչ միայն որպես ֆինանսական շահույթ, այլև միջին մասնագիտական կրթության բովանդակության արդյունավետության չափման ցուցանիշներ՝ հնարավոր կլինի համակողմանի գնահատել Կենտրոնի գործունեությունը: Տնօրենի տարեկան հաշվետվության

ձևաչափում որակական տվյալների և ԳԱՑ-երի հիման վրա վերլուծությունների իրականացումը ևս հնարավորություն կտա առավել համակողմանի գնահատել Կենտրոնի աշխատանքը և նպաստել դրա շարունակական բարելավմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է Կենտրոնի կողմից ավիաընկերությունների հետ համագործակցությամբ նոր կրթական ծրագրերի և կարճաժամկետ դասընթացների ներդնումը՝ դա դիտարկելով որպես հնարավորություն՝ նպաստելու արդիական մասնագետների պատրաստմանը, մասնագիտական հմտությունների բարելավմանը և որակավորումների բարձրացման դասընթացների շարունակական արդիականացմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատությունը իր իրավակազմակերպական ձևին ու իր գործառույթները համակարգող Քաղավիացիայի կոմիտեի պահանջներին համահունչ մշակել է գործարար ծրագիր, որտեղ սահմանված է Կենտրոնի առաքելությունը, գործունեության ուղղությունները, շահակիցներն ունեն համանման ընկալումներ ԱՈւԿ-ի դերի ու նպատակների մասին, առկա են ծրագրի վերանայման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈւԿ-ի համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները։

Փաստեր

Ավիաուսումնական կենտրոնի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի և Ընդհանուր ժողովի կողմից։ Կենտրոնի կառավարման բարձրագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովը, կազմված է 3 անդամից, որոնք Կենտրոնի, որպես ՓԲԸ-ի, կառավարիչներն են։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնն իրականացրել է ֆինանսական համապատասխան պլանավորում՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ԳԾ նպատակների իրականացման համար։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կենտրոնի ԳԾ պլան-ժամանակացույցում տեսանելի են պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները։ Ֆինանսների բաշխումը Կենտրոնն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը։ 2023թ.–ի ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների

աշխատավարձերը՝ 83.7%, գույքի ձեռքբերումը՝ 4.9%, ինչպես նաև ուսումնական նյութերի ձեռքբերումը՝ 4.3% և այլն։

Կենտրոնի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա ուղղահայաց կապերը։ Կենտրոնում գործող ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է համապատասխան կանոնակարգերով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնում կան հաստիքային աշխատողներ, որոնք իրականացնում են մեկից ավելի գործառույթներ։ Մասնավորապես, Ուսումնական բաժնի վարիչը պատասխանատու է ոչ միայն ուսումնական գործընթացի կազմակերպման համար, այլև պրակտիկայի պատասխանատուն է, շրջանավարտների հետ կապ է պահպանում, համակարգում է կուրսղեկների աշխատանքը, մանկավարժական խորհրդի նախագահն է, անհրաժեշտության դեպքում նաև գործատու-դասախոսներ է փնտրում։ Կենտրոնում ամբիոններ կամ կրթական ծրագրերի պատասխանատուներ չկան։ Կրթական ծրագրերի մասով ուսումնական գործընթացի կազմակերպչական հարցերը դրված են 3 կուրսղեկների վրա՝ համատեղության հիմունքներով։ Մասնավորապես, որակի ապահովման կառավարիչը նաև կուրսղեկ է։

Հաշվի առնելով գործընթացների այս անհամաչափ բաշխումը, Կենտրոնի ուսանողական համակազմի թվաքանակի աճը վերջին տարիներին և դրանով պայմանավորված Կենտրոնի գործունեության ծավալների ավելացումը՝ Կենտրոնը նախատեսել է հաստիքացուցակի փոփոխություն, կազմվել է նախագիծ, որը ներառում է որոշ հաստիքների կրճատում՝ մասնավորապես մեքենագրողների, և նոր հաստիքների ավելացում Ուսումնական բաժնում, այդ թվում՝ ուսումնական գործընթացի կառավարիչ, որն իրականացնելու է որակի ապահովման գործառույթներ Ուսումնական բաժնի շրջանակներում։

Դասախոսական և ուսանողական ներկայացուցիչներ ներգրավված չեն Ընդհանուր ժողովում։ Դասախոսական կազմն ընդգրկված է մանկավարժական խորհրդում։ Մանկավարժական խորհրդում քննարկվում են Կենտրոնի ուսումնական գործընթացին վերաբերող հարցերը, այդ թվում՝ ՄԿԾ-ների, առարկայական ծրագրերի, դասաբաշխման, ուսանողների հեռացման, վերականգնման, զեղչերի տրամադրման և այլ նմանատիպ հարցեր։ Ուսանողները ներգրավված չեն կառավարման որևէ մարմնում։

Կենտրոնի գործունեությունն իրականացվում է երկարաժամկետ՝ եռամյա և կարճաժամկետ՝ ընթացիկ տարեկան պլանավորումներով։ Ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերը կազմվում են տարեկան պլանավորմամբ։ Պլանների դիտարկումը ցույց տվեց, որ ըստ տարիների գործողությունները կրկնվում են, փոփոխությունները հիմնականում պայմանավորված են նոր դասընթացների և կրթական ծրագրերի ներդրմամբ։ Պլաններում նշված չեն ռազմավարական հիմնախնդիրներ, չկա անդրադարձ ԳԾ նպատակներին և վերջնարդյունքներին։ Պլաններում չկան սահմանված ակնկալվող արդյունքներ, թվարկված են գործողություններ, ժամկետները և առանձին սյունակով

«Նշումներ»՝ կատարման մասին։ Վերջինս ըստ էության օգտագործվում է որպես հաշվետվություն՝ լրացվելով «Կատարված է»։

Կենտրոնում առկա Ուսումնական և Ընդհանուր բաժինները իրենց պլանները ներկայացվում են պլան–հաշվետվություն ձևաչափով։ Առանձին հաշվետվություն ներկայացնում է միայն Որակի կառավարիչը։ Այն հիմնականում ներառում է վերստուգումների և ուսումնական գործընթացի վերահսկողության վերաբերյալ տեղեկատվություն՝ առանց վերլուծական անդրադարձի։ Հաշվետվությունները կանոնակարգվում են ստորաբաժանումների կարգերով, իսկ վերստուգումների ընթացակարգերը նկարագրված են Որակի ձեռնարկում։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ, բացի ձևաչափային տարբերություններից, ստորաբաժանումների և Որակի կառավարչի հաշվետվությունները ներկայացվում են տարբեր պարբերականությամբ՝ եռամսյա, կիսամյակային կամ տարեկան։

Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ Կենտրոնում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև։ Ստորաբաժանումների միջև գործառնական կապերը զարգացած են՝ պայմանավորված Կենտրոնի փոքր կառուցվածքով։ Դրանով պայմանավորված նաև տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլաններում կրկնվող գործողություններ չկան։ Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ ինչպես ստորաբաժանումների, այնպես էլ տնօրենի տարեկան հաշվետվության մեջ արտահայտված չէ վերլուծական բաղադրիչը։ Տնօրենը չի ներկայացնում կրթական գործընթացի, ձեռբերումների և թերացումների վերաբերյալ բովանդակային հաշվետվություններ, որոնք որևէ կերպ կկապվեին նաև Կենտրոնի զարգացման ուղղությունների հետ։

Կենտրոնը 2024թ.–ին առաջին անգամ իրականացրել է հարցումներ՝ Կուրսղեկի աշխատանքների արդյունավետության գնահատում, Ուսանողների կողմից դասախոսի անանուն գնահատում, ԱՈՒԿ գործունեության արդյունավետության հարցում, Ուսումնառության ռեսուրսների գնահատում, որոնց միջոցով փորձել է իրականացնել ներքին խնդիրների վերհանում։ Հաշվի առնելով, որ հարցումները նոր են կիրառվել, դրանց հիման վրա բարելավման քայլեր դեռևս չեն ձեռնարկվել։

Կենտրոնի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է տնօրենի կողմից՝ Քաղավիացիայի կոմիտեի և գործատուների հետ քննարկումների արդյունքում։ Գործատուները ներկայացնում են նաև իրենց առաջարկությունները՝ ավարտական ամփոփիչ քննությունների հանձնաժողովների կազմում ընդգրկված լինելով։

Կենտրոնը չունի կարիերայի պատասխանատու։ Աշխատաշուկայի ուսումնասիրություն, արտաքին շահակիցների հետ հետադարձ կապ ապահովելուն միտված կանոնակարգված միջոցառումներ չեն իրականացվում։ Նախորդ ԳԾ–ների կատարողականի վերլուծություններ ևս չեն իրականացվել։ Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար այլ մշակված գործիքակազմ Կենտրոնը դեռևս չունի։

Կենտրոնը փորձել է բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքը՝ այն նկարագրելով Որակի ձեռնարկում: Որակի կառավարիչն իր աշխատանքներում որոշակիորեն դրել է այդ պահանջը, սակայն մյուս ստորաբաժանումներում դեռ արմատավորված չէ սկզբունքի կիրառումը: Մասնավորապես, ԳԾ–ն և կրթական ծրագրերը որոշակիորեն անցնում են այդ շրջափուլով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կենտրոնում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և մասամբ իրականացման փուլերում:

Տեղեկատվության հավաքագրման կայուն մեխանիզմներ առկա չեն: Հիմնական հավաքագրվող տեղեկատվությունը թվային տվյալ է ուսանողների շարժի վերաբերյալ, շրջանավարտների վերաբերյալ հաջողված պատմություններ ու տվյալներ չեն հավաքագրվում: Շրջանավարտների մասին ունեցած տեղեկատվությունը հիմնականում նույն ոլորտում լինելու և անհատական շփումների շնորհիվ է: Տեղեկատվության հավաքագրումը գնահատող մեխանիզմներ առկա չեն:

Կենտրոնն ունի կայքէջ և ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են Կենտրոնի առօրյա գործընթացները, սակայն, մասնավորապես ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում՝ կայքի «Ուսումնական ծրագրեր» բաժինը համալրված չէ, հաշվետվություններն արտաքին շահակիցների համար հասանելի չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում վերջին տարիներին կառավարման համակարգի կողմից իրականացված քայլերը, որոնք նպաստել են Կենտրոնի ԳԾ պլան-ժամանակացույցով սահմանված միջոցառումների իրականացմանը: Կենտրոնում ստորաբաժանումների միջև ուղղահայաց կապերը ձևավորված են, սակայն որոշ հաստիքներ իրականացնում են մեկից ավելի գործառույթներ: Այս մոտեցումը, թեև ապահովում է կառավարման ճկունություն, սակայն կարող է հանգեցնել գործընթացների ծանրաբեռնվածության և անհավասար բաշխման, ինչն իր հերթին կարող է ազդել աշխատանքի արդյունավետության վրա:

Փորձագիտական խումբը գնահատում է Կենտրոնի քայլերը հաստիքացուցակի վերանայման ուղղությամբ, սակայն նախագծով առկա կառուցվածքը ևս չի ապահովում, օրինակ, կարիերայի պատասխանատուի կամ Կենտրոնի համար կարևոր համարվող միջազգային կապերի համար պատասխանատուի հաստիք, ինչը կարող է վտանգել այդ ուղղություններով զարգացումը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ Կենտրոնի դասախոսական և ուսանողական կազմը փաստացի ընդգրկված չեն կառավարման որևէ մարմնում, և նման հնարավորություններ սահմանված չեն որևէ կանոնակարգով: Վերջինս չի ապահովում դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը Կենտրոնի որոշումների կայացման գործընթացում:

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում Կենտրոնում ոչ միասնական ձևաչափերով ստորաբաժանումների պլանների և հաշվետվությունների մշակումը: Մասնավորապես, պլան-հաշվետվություն համատեղ ձևաչափի կիրառումը չի նպաստում

բովանդակային և վերլուծական հիմքով հաշվետվությունների կազմմանը, խնդիրների վերհանմանը և բարելավման ուղիների մատնանշմանը: Տնօրենի հաշվետվությունների ընտրված ձևաչափը ևս չի կապվում ռազմավարական զարգացման ուղղությունների հետ, չի ներառում կրթական գործընթացի, ձեռբերումների և թերացումների վերաբերյալ բովանդակային վերլուծություններ, ինչը թույլ չի տալիս համընդհանուր պատկեր կազմել Կենտրոնի զարգացման վերաբերյալ:

Փորձագիտական խումբը գնահատում է Կենտրոնի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման համար կիրառվող մեխանիզմները, սակայն աշխատաշուկայի մանրակրկիտ ուսումնասիրության և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման պակասը կարող են խոչընդոտել շուկային համապատասխան մասնագետների պատրաստման ընթացքը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՊԻԳԲ սկզբունքի կիրառման պահանջի ամրագրումը Որակի ձեռնարկում, սակայն այն դեռևս արմատավորված չէ Կենտրոնի կառավարման և վարչարարության մեջ, ինչը կարող էր ապահովել գործընթացների կառավարման ժամանակ պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման փուլերի միջև փոխկապակցվածությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնում տեղեկատվության հավաքագրման և դրանց գնահատման կայուն մեխանիզմների ներդրումը կարող է ստեղծել անհրաժեշտ հիմքեր կառավարչական հիմնավորված որոշումների կայացման համար: Մյուս կողմից Կենտրոնում կայացվող որոշումների և ՄԿԾ-ների վերաբերյալ արտաքին շահակիցների համար թափանցիկության ապահովումը կարող է նպաստել Կենտրոնի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը և վստահության մթնոլորտի ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնի գործարար ծրագիրը չի արտացոլում Կենտրոնի երկարաժամկետ զարգացման ուղղությունները, առկա չեն պլանավորման ու երկարաժամկետ զարգացման ուղղությունների փոխկապակցման մեխանիզմներ, ներդրված չեն Կենտրոնի և իր ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչներ, հաշվետվությունները կրում են նկարագրական բնույթ, կառավարչական որոշումների կայացման համար պարբերաբար ու շահակիցների ամբողջական շրջանակը ներառող տվյալներ չեն հավաքագրվում, ներքին և արտաքին շահակիցների՝ կառավարչական որոշումներում ներգրավման մեխանիզմներ ներդրված չեն, ՊԻԳԲ շրջափուլը դրված չէ կառավարման ու վարչարարության իրականացման հիմքում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈՒԿ-ի համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Ավիաուսումնական կենտրոնն իրականացնում է միջին մասնագիտական երեք կրթական ծրագիր՝ «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում օդային տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում»: Նշված կրթական ծրագրերում ուսուցումն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով: Կենտրոնում կրթություն է ստանում 142 ուսանող:

Ավիաուսումնական կենտրոնը համագործակցող գործատուների հետ քննարկումների և աշխատաշուկայի ուսումնասիրման արդյունքում պատրաստվում է 2025-2026 ուսումնական տարում ներդնել նոր կրթական ծրագիր՝ «Թռչող ապարատների ավիացիոն և ռադիոէլեկտրոնային սարքավորումների տեխնիկական շահագործում», որակավորումը՝ տեխնիկ: Նոր կրթական ծրագրի վերաբերյալ դրական կարծիքներ են ուղղարկել «Հայկական ավիաուղիներ» ՍՊԸ և «Նովէյր» ավիաընկերությունը:

Կրթական ծրագրերի առանձին պատասխանատուներ Կենտրոնը չունի: Կենտրոնի դասախոսական կազմը մասնակցում է պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը: 2022թ. «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում», իսկ 2023թ. «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտության չափորոշիչների, ուսումնական պլանի և մոդուլային ծրագրերի մշակման գործընթացում ընդգրկվել են Կենտրոնի ավիացիոն մասնագետներ, դասախոսներ:

Կենտրոնում կրթական ծրագրերն իրականացվում են առկա ձևաչափով՝ միջնակարգ կրթության հիմքով: Բացի հիմնական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ընտրովի ժամերի հաշվին «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում» մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլանում ներդրվել են «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա» առարկաները, իսկ մյուս կրթական ծրագրերի պահուստային և ընտրովի ժամերը հատկացվել են «Մասնագիտական անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաներին՝ հիմք ընդունելով գործատուների պահանջը օտար լեզուների կատարելագործման ուղղությամբ:

Կենտրոնը հետևում է ICAO-ի (International Civil Aviation Organization՝Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն, այսուհետ՝ ICAO) և EASA-ի (European Union Aviation Safety Agency՝ Եվրոպական Միության ավիացիոն անվտանգության գործակալություն, այսուհետ՝ EASA) ստանդարտներին, ինչի արդյունքում պարբերաբար վերանայում է մոդուլային ծրագրերը՝ ապահովելու համապատասխան ստանդարտներին դրանց համահունչությունը:

Պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ ՄԿՈՒԶԱԿ-ի հետ, քննարկում են փոփոխությունները: Դասընթացի (մոդուլի) ծրագրերը կազմելիս Կենտրոնն առաջնորդվում է ՊԿՉ-ներով՝ անհրաժեշտության դեպքում կատարելով հիմնականում ժամային փոփոխություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մոդուլային ծրագրերի մասնագիտական թեմաները նախ անցնում են տվյալ մոդուլի դասավանդման ընթացքում հայերեն, իսկ այնուհետև օտար լեզուների դասաժամերին նույն թեմաներն անցնում են ռուսերեն և անգլերեն տարբերակներով՝ հաշվի առնելով լեզվաիմացության բավարար մակարդակի ապահովման պահանջը:

Կենտրոնում դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում չի կիրառվում. դասախոսներն ազատ են ընտրելու դասավանդման մեթոդները: Դասավանդման լավ փորձերը չեն ուսումնասիրվում, վերլուծվում կամ տարածվում: Դասալսումներն ու մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ դասախոսների մեծ մասը նախընտրում է կիրառել պատմելու մեթոդը՝ ուսանողներին տրամադրելով ուսումնառության նյութը և բացատրելով թեման դրա հիման վրա: Այս գործընթացում ուսանողներն ավելի հաճախ իրականացնում են նյութի վերարտադրություն, քան դրա վերլուծություն կամ ստեղծագործական կիրառում: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները հնարավորություն են ունենում կիրառելու տեսական գիտելիքները և գործատուի միջավայրում իրականացնում են համապատասխան գործնական աշխատանքները՝ գործատուի վերահսկողությամբ ծանոթանալով կոնկրետ տիպի տեխնիկային, որը կիրառվում է ներկայումս: Գործնական առաջադրանքների իրականացման համար ռեսուրսների պակասի դեպքում Կենտրոնը դեռ չի կիրառում համակարգչային ծրագրերը և վիրտուալ փորձարկման գործիքները:

Հետազոտական կարողությունների զարգացման համար ուսանողներին հանձնարարում են գրել ռեֆերատներ և կուրսային աշխատանքներ: Սակայն այս աշխատանքները հիմնականում ներկայացնում են տեսական նյութի շարադրում և չեն պարունակում հետազոտական տարրեր կամ վերլուծություններ: Դրանց իրականացման համար սահմանված հստակ պահանջներ առկա չեն:

Կենտրոնն ունի «Ուսանողների գիտելիքների գնահատման, բողոքարկման» կանոնակարգ և «Գիտելիքների ստուգման, ստուգարքների, քննությունների անցկացման, գնահատման և վերահանձնման» կանոնակարգ: Ուսանողների գնահատումն իրականացվում է 5 միավորանոց համակարգով: Գնահատականի բողոքարկման դեպքեր գրանցվել են, որոնց շրջանակում ուսանողները դիմել են կուրսղեկին: Նման դեպքերում իրականացվել է կրկնակի քննություն՝ Որակի կառավարչի վերահսկողության ներքո:

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզվել է, որ ընթացիկ առաջադրանքների գնահատման դեպքում ուսանողներին հնարավորություն է տրվում բարձրացնել իրենց գնահատականները՝ լրացուցիչ հարցերին պատասխանելու կամ իրավիճակային առաջադրանքների միջոցով:

Մոդուլային ծրագրերում հստակ սահմանված է յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի գնահատման ձևաչափը, որը կարող է ներառել թեստային առաջադրանքներ կամ գործնական աշխատանքներ՝ իրավիճակային հարցերով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսական կազմը ոչ միշտ է կիրառում գնահատման թերթիկները, որոշ դեպքերում դասախոսներն ընտրում են գնահատման մեթոդները՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին որոշ մասնագիտական մոդուլների գնահատումն իրականացվում է ընթացիկ քննությունների միջոցով, որոնց շրջանակում կիրառվում են կիսամյակային ամփոփիչ հարցաշարեր:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, մասնագիտական (արտադրական) պրակտիկա և նախաավարտական պրակտիկա: Վերանայված ՊԿՉ-ներում ավելացվել են պրակտիկաների շաբաթները՝ ըստ կիսամյակների: Այսպես, «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում» մասնագիտության վերանայված ՊԿՉ-ում պրակտիկայի շաբաթներն ավելացվել են 11-ից դառնալով 25, «Փոխադրումների կազմակերպում և կառավարում օդային տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտությունում՝ 10-ից դառնալով 24, «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում» մասնագիտությունում՝ 6-ից դառնալով 27:

Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում նշվում է տեղեկություն պրակտիկայի վայրի, ժամանակահատվածի մասին, ներառվում է ուղեգիրը, նշված են պրակտիկայի ընթացքում ուսանողի պարտականությունները, կատարված աշխատանքի համառոտ բնութագիրը, ուսանողի վերլուծությունը պրակտիկայի ընթացքի մասին, ուսանողի արդյունքների եզրակացությունը և գնահատականը պրակտիկայի վայրի ղեկավարի և Կենտրոնի կողմից: Որպես այդպիսին պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված չեն: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հաշվի են առնվում ուսանողների հաճախումները, ակտիվությունը: Պրակտիկաների անցկացման հիմնական բազան է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանն իր տարբեր ենթակառուցվածքներով, Հայաստանի աերոնավիգացիոն ծառայությունը:

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, որոնց հարցաշարերը ներառում են տեսական և գործնական հարցեր: Այսպես օրինակ, «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում» մասնագիտության քննությունները կազմված են թեստային ձևաչափով, որտեղ ընդգրկված են նաև գործնական հարցեր: «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում» մասնագիտության քննություններում առկա են իրավիճակային հարցեր, որոնք ստուգում են ուսանողների գործնական հմտությունները: Սակայն «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտության քննությունները հիմնականում հիմնված են տեսական հարցերի վրա:

Նախկինում յուրաքանչյուր կրթական ծրագրից ուսանողները հանձնում էին երեք առանձին պետական քննություն՝ առանձին առարկաներից կամ մոդուլներից: Այդ

քննությունները նախատեսված էին մեկ առարկայի համար և չունեին համալիր բնույթ։ Վերանայված ՊԿՉ-ով նախատեսվում է անցկացնել համալիր քննություն, որը ներառում է ինչպես մասնագիտական, այնպես էլ հատուկ մոդուլների հարցեր։

Կենտրոնում կրթական ծրագրերի բենչմարքինգի, մշտադիտարկման հստակ կարգեր և մեխանիզմներ դեռևս ներդրված չեն։ Այնուամենայնիվ, կրթական ծրագրերը համահնչեցվում են միջազգային ստանդարտներին՝ հատկապես ICAO-ի պահանջներին։ Այսպես օրինակ, 2024 թվականին «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում» մասնագիտության մասնագիտական մոդուլների ծրագրերը վերանայվել են ICAO-ի ստանդարտներին համապատասխան, պարբերաբար վերանայվում է նաև Մասնագիտական անգլերենի դասընթացի ծրագիրը։

Կենտրոնում ՄԿԾ-ների մշտադիտարկման հստակ պարբերականություն սահմանված չէ։ Այսուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ քննարկումներ կազմակերպվում են։ Մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները վերանայում են իրենց դասավանդած մոդուլների ծրագրերը՝ հետևելով ICAO-ի և EASA-ի ստանդարտներին և հաշվի առնելով ուսանողների արձագանքները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կենտրոնի կողմից միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, որոնք համահունչ են Կենտրոնի առաքելությանը և ուղղված են ավիացիայի ոլորտում արդիական մասնագետների պատրաստմանը։ Այս ծրագրերը ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաղադրիչներ, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացմանը։ Կրթական ծրագրերի գործնական բաղադրիչի ամրապնդումը հնարավորություն է կտա ուսանողներին պատրաստվել իրական աշխատանքային միջավայրում գործելու համար։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կենտրոնի նախաձեռնությունը 2025-2026 ուսումնական տարում նոր կրթական ծրագիր ներդնելու ուղղությամբ, որը մշակվել է աշխատաշուկայի և գործատուների հետ քննարկումների հիման վրա։ Նոր ծրագրի ներդրումը կարող է ավելացնել շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում և խթանել ոլորտի մասնագիտական զարգացմանը։

Կենտրոնի դասավանդման մեթոդները հիմնականում կենտրոնացած են տեսական նյութի ներկայացման վրա՝ առանց վերլուծական կամ ստեղծագործական հմտությունների զարգացման։ Խումբը կարևորում է դասավանդման մեթոդների պարբերական վերանայման և դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրումը։ Հատկապես կարևոր է ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված հստակ պահանջների և չափանիշների մշակումը։

Փորձագիտական խումբը շեշտադրում է բոլոր կրթական ծրագրերի համար ուսանողներին տրվող հանձնարարականների փաթեթների մշակումը, ինչը կներառի գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը և թույլ կտա վերահսկել ուսանողների առաջընթացը։

Թեև ուսումնական պլաններում ներառված են պրակտիկայի տարբեր տեսակներ, փորձագիտական խումբը նկատում է, որ պրակտիկաների անցկացման և գնահատման գործընթացներում որոշակի բացեր կան։ Պրակտիկայի գնահատման հստակ չափանիշների բացակայությունը սահմանափակում է պրակտիկայի արդյունավետության գնահատման հնարավորությունը։ Հստակ չափանիշների մշակումը թույլ կտա վերահսկել ուսանողների պրակտիկայի արդյունավետությունը և նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը։

Հաշվի առնելով, որ պետական ամփոփիչ ատեստավորումը ներկայումս չի գնահատում կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ամբողջականորեն՝ փորձագիտական խումբը գտնում է, մասնագիտական և միջառարկայական հարցեր ներառող համալիր քննությունների անցկացումը և դիպլոմային աշխատանքների ներդնումը կօգնեն ուսանողների պատրաստվածության համապարփակ գնահատմանը։

Չնայած մոդուլային ծրագրերը պարբերաբար վերանայվում են միջազգային ստանդարտներին համապատասխան, վերանայման գործընթացը չունի հստակ կանոնակարգեր և պարբերականություն։ Խումբը կարևորում է ծրագրերի վերանայման հստակ պլանի և բենչմարքինգի մեխանիզմների ներդրումը՝ միջազգային չափանիշներին համապատասխանությունը պահպանելու համար։

ՄԿԾ-ների մշտադիտարկման հստակ գործընթացի և պարբերականության սահմանումը կբարձրացնի կրթական ծրագրերի արդիականացման, արդյունավետության և շարունակական զարգացման մակարդակը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ Կենտրոնը, ներգրավված լինելով ՊԿՉ-ների մշակման գործընթացում, կատարել է համապատասխան առաջարկներ կրթական ծրագրերի մշակման համար, դասախոսները, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով, մշակում են համապատասխան մոդուլային ծրագրերը և առաջադրանքները, հաշվի առնելով ոլորտային միջազգային պահանջները՝ վերանայվում են կրթական ծրագրերը, պրակտիկաների շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեն ձեռք բերելու գործնական կարողություններ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈՒԿ-ի համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Ուսանողների հավաքագրման նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա նախաշեմին Կենտրոնի ներկայացուցիչներն այցելություններ են իրականացնում ավագ

դպրոցներ, հանդիպում աշակերտների և նրանց ծնողների հետ։ Այս միջոցառումների ընթացքում ներկայացվում են ուսումնական կենտրոնի մասնագիտությունները և ուսուցման հնարավորությունները։ Բացի դրանից, Կենտրոնն իրականացնում է բաց դռների օրեր, հեռուստատեսային հայտարարություններ, օգտագործում է ֆեյսբուքյան էջը, պաշտոնական կայքը՝ ուսումնական կենտրոնի ծառայությունները լուսաբանելու և տեղեկատվություն տրամադրելու համար։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացվող աշխատանքների արդյունքում աճել է դիմորդների թիվը։ 2024-2025 ուսումնական տարում կենտրոնում ուսանողների թիվը հասել է 142-ի՝ նախորդ 5 տարիների համեմատությամբ աճելով շուրջ 100 ուսանողով։

Ավիաուսումնական կենտրոնում ուսանողների ընդունելությունն իրականացվում է միջնակարգ կրթության հենքով։ Ընդունելության համար հիմք են հանդիսանում կրթության ատեստատի ներդիրի գնահատականները կամ ցանկացած քոլեջի, ինստիտուտի կամ համալսարանի դիպլոմի առկայությունը։

Ուսանողների հեռացումների տոկոսը ըստ նախորդ երկու տարիների ցուցանիշների՝ 24%-ից նվազել է 8%, իսկ վերականգնվող ուսանողների թիվը 1,6%-ից աճել է 3,8%։ Ուսանողների հեռացման հիմնական պատճառներն են անհարգելի բացակայությունները, ուսման վարձավճարը չմուծելը, ուսումնական պարտքերը և կենտրոնի ներքին կարգապահական կանոնների խախտումը։ Անհարգելի բացակայությունների կանխարգելման նպատակով կենտրոնում իրականացվում է վերահսկողություն. կուրսղեկները մշտապես կապ են պահպանում ուսանողների և նրանց ծնողների հետ։ Անբավարար առաջադիմության հետ կապված հեռացումները նվազեցնելու համար կենտրոնում իրականացվում են նաև լրացուցիչ խորհրդատվություններ։

Կրթական կարիքների վերհանման նպատակով իրականացվել է հարցում ուսանողների շրջանում։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հարցումները դեռևս պարբերական բնույթ չեն կրում, նոր են մեկնարկել հաստատությունում։ Դրանց միջոցով ուսանողները նշել են ռեսուրսների թարմացման անհրաժեշտությունը։ Այլ մեխանիզմներ (օրինակ՝ հարցազրույցներ, ֆոկուս-խմբային քննարկումներ) չեն իրականացվել։ Կրթության բովանդակությանը, գնահատման համակարգին առնչվող խնդիրներ չեն վերհանվել։

Այցից պարզ դարձավ, որ կարիքների վերհանման նպատակով ուսանողները հաճախ դիմում են կուրսղեկներին կամ Կենտրոնի տնօրենին։ Այսկերպ Կենտրոնում ուսանողները բարձրաձայնել են անգլերենի խորացված ուսուցման անհրաժեշտության մասին։ Արդյունքում, ավելացվել են մասնագիտական անգլերենի դասաժամերը՝ պահուստային ժամերի հաշվին։ Ուսանողների հետ քննարկումների արդյունքում ձեռք է բերվել վարժասարք, հաշվառման սեղան։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական անձնակազմին դիմելու ժամանակացույց Կենտրոնը չի սահմանել։ Ուսանողների քիչ թվաքանակով պայմանավորված՝ ուսանողներն ազատ են իրենց հուզող հարցերով դիմելու տնօրենին, ինչպես նաև Կենտրոնի անձնակազմին։ Այսկերպ ուսանողները ստանում են

համապատասխան տեղեկատվություն պրակտիկաների, գործնական պարապմունքների կազմակերպման և իրենց հուզող այլ հարցերի վերաբերյալ։

Կենտրոնում ուսանողների հարցերին պատասխանելու, անհասկանալի խնդիրները պարզաբանելու նպատակով դասախոսների, կուրսղեկների կողմից կազմակերպվում են խորհրդատվական հանդիպումներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են պատասխանելու ուսանողների հարցերին։ Կենտրոնը առաջիկայում նախատեսում է այս խորհդրատական հանդիպումները կանոնակարգել և սահմանել դրանց պարբերականությունը։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ ներկայումս մասնագիտական ուղղվածությամբ լրացուցիչ պարապմունքներ առկա չեն։

Ուսանողական խորհուրդը ձևավորվել է 2023թ.-ին։ Խորհրդի գործունեության կանոնակարգը հաստատվել է 2024թ. փետրվարին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհուրդը միջոցառումների պլան դեռ չունի։ Խորհրդի աշխատանքների իրականացման համար առանձին բյուջե հատկացված չէ, սակայն Կենտրոնի ղեկավար կազմը պատրաստակամ է աջակցելու ուսանողներին միջոցառումների կազմակերպման հարցում։

Խորհրդի կանոնակարգով նախատեսված է ուսանողների իրավունքների պաշտպանության և կարիքների վերհանման վերաբերյալ գործողությունների իրակացումը։ Այս ուղղությամբ աշխատանքները դեռ չեն մեկնարկել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն կազմակերպել է տոնական օրերին նվիրված միջոցառումներ՝ փորձելով ներգրավել Կենտրոնի բոլոր ուսանողներին։ Առաջիկայում նախատեսում է նաև համագործակցություն հաստատել այլ քոլեջների ՈՒԽ-ների հետ համատեղ միջոցառումներ իրականացնելու և Կենոտրոնի մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով։ Կենտրոնի ճանաչելիությունը բարձրացնելու նպատակով ՈւԽ-ն սկսել է վարել Կենտրոնի ինստագրամյան էջը, որի հետևորդների թիվը դեռ չի գերազանցում 30-ը։ Այս հարթակում ակտիվ հրապարակումներ ևս դեռ չեն իրականացվում։

Կենտրոնը չունի ուսանողների և շրջանավարտների կարիերայի աջակցման համար պատասխանատու ստորաբաժանում կամ մասնագետ։ Շրջանավարտների մասնագիտական հետագծի վերաբերյալ տվյալներ չեն հավաքագրվում։ Մինչ փորձագիտական այցը շրջանավարտների բազա նույնպես ձևավորված չէր։ Շրջանավարտների հետ կապը հիմնականում պահպանում են կուրսղեկները և կենտրոնի ղեկավարությունը՝ օգտվելով Օդանավակայանի տարածքում գտնվելու հանգամանքից, ինչը հեշտացնում է հաղորդակցությունը։ Այնուամենայնիվ, նրանց կարիքները համակարգված չեն ուսումնասիրվում, և նրանք ներգրավված չեն կրթական ծրագրերի բարելավման գործընթացում։ Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ Կենտրոնի ղեկավարությունն աջակցում է շրջանավարտներին՝ գործատուների հետ ունեցած կապերի միջոցով նրանց ուղղորդելով աշխատանքի անցնելու հարցում։

Կենտրոնը դեռ չի հստակեցրել ավիացիոն ոլորտում միջին մասնագիտական կրթական մակարդակում հետազոտության իրականացման և ուսանողների ներգրավման մեխանիզմները։ Փորձագիտական խմբի կողմից ուսանողների կատարած անհատական և

կուրսային աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հիմանականում նկարագրական են, վերլուծական բաղադրիչը թույլ է արտահայտված։

Ուսանողներին տրամադրվող ծառայությունների գնահատման և ուսումնական միջավայրի բարելավման նպատակով սկսել են գործածվել հարցումները, որոնց միջոցով բացահայտված խնդիրների հիման վրա բարելավման գործողությունների ծրագրեր դեռ չեն մշակվել։

Դատողություններ: Կենտրոնի ուսանողների հավաքագրման և ընդունելության գործընթացների վերլուծությունը վկայում է ուսանողների թվի զգալի ավելացման մասին։ Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից կրթական ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների շարունակական իրականացումն ուսանողների կայուն թվաքանակն ապահովելու և ուսանողական համակազմն ընդլայնելու նպատակով։

Ուսանողների կարիքների վերհանման և դրանց հիման վրա բարելավումների իրականացման գործընթացները դեռևս համակարգված և պարբերական չեն։ Կենտրոնին անհրաժեշտ է ներդնել ուսանողների կարիքների վերլուծության ամբողջական համակարգ, որը կհիմնվի պարբերական հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների և տվյալների խորքային վերլուծության վրա։ Վերհանված կարիքների հիման վրա ուսումնական միջավայրի բարելավումը կնպաստի ուսանողների գոհունակության բարձրացմանը և ակադեմիական առաջընթացին։

Խորհրդատվական ծառայությունների հստակեցումը ևս առաջնային նշանակություն ունի։ Խորհրդատվությունների պարբերականության հստակեցումը և ըստ ուսանողների կարիքների իրականացումը հնարավորություն կտա նպաստել ուսանողների առաջադիմության բարձրացմանը, ինչպես նաև նեղ մասնագիտական կողմնորոշման իրականացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Ուսանողական խորհրդի ձևավորումը, որի գործունեությունը կարող է դառնալ ուսանողների ներգրավվածության և կենտրոնի ճանաչելիության բարձրացման հարթակ։ Այս համատեքստում կարևոր է նաև ուսանողների իրավունքների ու պարտականությունների իրազեկման շարունակական իրականացումը, ինչը հնարավորություն կտա շարունակաբար վեր հանել ուսանողների խնդիրները և բարելավել ուսումնական միջավայրը։

Կարիերայի աջակցման համակարգի բացակայությունը կարող է սահմանափակել շրջանավարտների հետ հետագա համագործակցությունը և նրանց մասնագիտական աջակցության հնարավորությունները։ Փորձագիտական խումբը գտնում է, որ շրջանավարտների տվյալների բազայի ձևավորումը և պարբերական թարմացումը, նրանց կարիերայի զարգացման մշտադիտարկումը և համապատասխան աջակցության ծրագրերի (օրինակ՝ գործատուների հետ համատեղ կարիերայի օրերի կազմակերպում) իրականացումը կարևոր են ուսանողների մասնագիտական աշխատանքի հնարավորությունների ստեղծման համար։

Հետազոտական կարողությունների զարգացման համար կարևոր է անհատական և կուրսային աշխատանքների պահանջների վերանայումը: Վերլուծական և հետազոտական բաղադրիչների ընդգրկումը, ինչպես նաև հստակ ուղեցույցների և գնահատման չափանիշների սահմանումը, որոնք կնպաստեն ուսանողների քննադատական մտածողության և հետազոտական հմտությունների զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կենտրոնում գործում են ուսանողների հավաքագրման ու ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողների կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում տեղի են ունեցել փոփոխություններ, ուսանողներին տրամադրվում է համապատասխան աջակցություն դասախոսական ու վարչական կազմի կողմից, ձևավորվել է Ուսանողական խորհուրդ ուսանողների իրավունքների իրազեկման ու պաշտպանության նպատակով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈՒԿ-ի համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի համալրումն իրականացվում է մրցութային և ոչ մրցութային ձևով: Մրցութային ձևով անցկացման դեպքում թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ՝ ըստ «Դասախոսի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման, անցկացման» կանոնակարգի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մինչ այժմ ինը թեկնածու է մասնակցել դասախոսական կազմի համալրման համար նախատեսված մրցույթի: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է Կենտրոնի դասախոսական կազմը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ մրցույթին դիմել և մասնակցել է միայն մեկ թեկնածու, որն էլ ընտրվել է հանձնաժողովի կողմից:

Դասախոսական կազմի ընտրության ոչ մրցութային ձևի դեպքում համապատասխան թեկնածուն հրավիրվում է աշխատելու Կենտրոնում գործատուների հետ համագործակցության շնորհիվ: Հրավիրված թեկնածուները ևս անցնում են հարցազրույց: Ներկայումս Կենտրոնի 5 դասախոս գործատուներ են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտ-դասախոսներ ներկայումս չկան:

Կենտրոնում աշխատելու համար անհրաժեշտ է անցնել մասնագիտական վերապատրաստում և ունենալ դասավանդելու թույլտվության սերտիֆիկատ, ինչը պահանջվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից: Կենտրոնում աշխատում են 24 դասախոս, որոնցից 21-ը ունեն բարձրագույն կրթություն, այդ թվում՝ մեկը գիտության թեկնածու, իսկ 3-ը՝ միջին մասնագիտական կրթություն:

Դասախոսների ընտրության և համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ դասախոսը դասավանդում է մինչև 10 մոդուլ:

2024 թվականի հունվարին Կենտրոնում հաստատվել է «Դասախոսի և նրա վարած դասընթացի» կանոնակարգ, որի համաձայն դասախոսների և նրանց դասավանդած դասընթացների գնահատումն իրականացվում է դասալսումների միջոցով: Կենտրոնում առկա է «Դասալսումների անցկացման» կանոնակարգ, դասալսումների ժամանակացույց և հատուկ ձևաթերթ, որը կիրառվում է դասալսումների ընթացքում: Դասալսումները հիմնականում կատարում են տնօրենը, որակի ապահովման կառավարիչը և ուսումնական բաժնի ղեկավարը: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ քննարկումների արդյունքում, օրինակ, առաջարկվել է դասերի ընթացքում ներկայացնել իրավիճակներ համապատասխան տեսանյութերի միջոցով: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ Կենտրոնում չեն իրականացվում փոխադարձ դասալսումներ՝ ներքին լավագույն փորձը տարածելու նպատակով:

Դասախոսի աշխատանքի գնահատման նպատակով Կենտրոնի կողմից մշակվել են նաև հարցաշարեր, օրինակ՝ Դասախոսի որակավորման համար ուսանողների կողմից դասախոսների անանուն գնահատման հարցաթերթիկը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այսկերպ դասախոսական կազմի գնահատումը նախատեսվում է առաջիկայում:

Կենտրոնը քայլեր է ձեռնարկում մասնագիտական մոդուլներ և մասնագիտական անգլերեն դասավանդող դասախոսների պարբերական վերապատրաստումների համար: Կենտրոնի բյուջեի նախահաշվի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բյուջեի մոտ 0,16%-ը հատկացվել է դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Մասնավորապես, դասախոսների մեթոդական կարողությունները զարգացնելու նպատակով ՀՊՄՀ-ի հետ համագործակցությամբ Կենտրոնը նախաձեռնել է դասախոսական կազմի վերապատրաստում «Մանկավարժական և զարգացման հոգեբանություն», «Ուսուցման ժամանակակից մեթոդներ» և «Ինֆորմացիոն տեխնոլոգիաները կրթության ոլորտում» թեմաներով: Բացի այդ, դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մեթոդական վերապատրաստումներին:

Կենտրոնում աշխատելու համար մասնագիտական վերապատրաստում անցնելը պարտադիր է: Ըստ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի պահանջների՝ Կենտրոնի բոլոր դասախոսները 2-3 տարին մեկ անգամ անցնում են մասնագիտական վերապատրաստումներ այնպիսի թեմաներով, ինչպիսիք են «Էլեկտրացանցի տեղակայման համակարգ», «Մարդկային

գործոններ», «Վառելիքաբաքի անվտանգություն» և «Ավիացիոն անգլերեն»։ Այս դասընթացները ևս կազմակերպվում և անցկացվում են Կենտրոնում։

Մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները մասնակցում են նաև Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, IATA-ի (International Air Transport Association՝ Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիա, այսուհետ՝ IATA) և ICAO-ի կողմից կազմակերպվող դասընթացներին։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսները կազմակերպում են վերապատրաստումներ իրենց գործընկերների համար, սակայն այս գործընթացը դեռևս համակարգված և պլանավորված չէ՝ ապահովելու փորձի լայն տարածումը։

Կենտրոնում հստակեցված չեն դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ։ Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական օրերի, տոների առթիվ Կենտրոնը ֆինանսական խրախուսում է հատկացրել դասախոսական կազմի և աշխատակազմի համար։

Դասախոսական կազմի համար սահմանված են տարակարգեր՝ ավագ դասախոս, առաջատար դասախոս։ Կենտրոնում ներկայումս աշխատում է 4 առաջատար դասախոս, ավագ դասախոսի տարակարգ ունեցող դասախոս չկա։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարակարգը սահմանելիս հաշվի են առնվում դասախոսի աշխատանքային ստաժը, աշխատանքային գործունեությունը։

Ներկայումս Կենտրոնում դասավանդողների միջին տարիքը 56 է։ Կրթական ծրագրերն ապահովված են համապատասխան դասախոսական կազմով՝ համալրվելով նաև Օդանավակայանի հետ համագործակցության արդյունքում։ Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի առանձին ռեզերվ Կենտրոնը չի ձևավորել։ Առկա չեն նաև դասախոսական կազմի երիտասարդացումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր։

Վարչական և ուսումնաօժանդակ կազմը համալրվում է ոչ մրցութային ձևով։ Դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ հաստիքներին ներկայացվող պահանջները և աշխատանքային պարտականությունները ներկայացված են պաշտոնի նկարագրերում։ Կենտրոնն ունի 4 վարչական, 12 ուսումնաօժանդակ աշխատակից։ ՈւՕ կազմում ներառված են Ուսումնական բաժնի վարիչը, մեթոդիստը, գրադարանավարը և այլք։

Կենտրոնի վարչական որոշ աշխատակիցներ (տնօրեն, որակի ապահովման կառավարիչ) իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Կենտրոնը, իր եզակի և պրոֆիլային բնույթը հաշվի առնելով, դասախոսական կազմի համալրման համար ներգրավում է պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետների և ոլորտի գործատուների։ Գործատուների ներգրավմամբ Կենտրոնն ապահովում է ոլորտին ծանոթ բարձրակարգ

մասնագետների համալրումը, ինչը նպաստում է ուսանողների կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը և մասնագիտական պատրաստվածությանը:

Խումբը գտնում է, որ պրակտիկ փորձառություն ունեցող դասախոսներից զատ, Կենտրոնն անհրաժեշտություն ունի ներդնելու երիտասարդ մասնագետների ներգրավման քաղաքականություն: Շրջանավարտներին հետագա մասնագիտական աճ ունենալու և վերապատրաստման միջոցով դասավանդման գործընթացում ներգրավելը կապահովի կադրային ռեզերվի ձևավորումը, Կենտրոնի շարունակական սերնդափոխությունը և դասավանդման կայունությունը, ինչը կօգնի խուսափել մասնագետների պակասից առաջացող ռիսկերից:

Դասախոսների վերապատրաստման և փորձի տարածման ուղղությամբ կենտրոնի ջանքերը, ֆինանսական միջոցներ տրամադրելը գնահատելի են և նպաստում են դասախոսների մեթոդական կատարելագործմանը: Փորձագիտական խմբի գնահատմամբ, եթե ներքին վերապատրաստումների և փոխադարձ դասալսումների գործընթացները համակարգվեն և պարբերական բնույթ կրեն, դրանք հնարավորություն կտան դասախոսական կազմի մասնագիտական հմտությունների շարունակական զարգացմանը և ներքին լավագույն փորձի տարածմանը: Սա կնպաստի դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Կենտրոնում դասախոսական կազմի բազմակողմանի ու պարբերական գնահատման մեխանիզմների ներդրումը կնպաստի դասավանդման որակի ավելի ամբողջական վերլուծությանը և դասախոսների աշխատանքի օբյեկտիվ գնահատմանը: Արդյունքների վերլուծության հիման վրա դասախոսների համար կազմակերպվող թիրախավորված վերապատրաստումները կապահովեն Կենտրոնի կրթական ծրագրերի միջազգային պահանջներին համապատասխանությունը և ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը:

Դասախոսական կազմի խրախուսման քաղաքականության հստակ չափանիշների ներդրումը կնպաստի դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և նրանց մասնագիտական աճի խթանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնն իր կրթական ծրագրերի առանձնահատկություններին համապատասխան համալրում է իր դասախոսական կազմը, սահմանված են հստակ չափանիշներ դասախոսական կազմի ընտրության համար, փորձում է ներգրավել գործատուներին դասավանդման գործընթացում, առկա են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ և վերապատրաստման հնարավորություններ, Կենտրոնն իրականացնում է դասախոսական կազմի խրախուսման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈւԿ-ի համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտական աշխատանքների իրականացումը Կենտրոնի ռազմավարական առաջնահերթություններից չի համարվում: Կենտրոնի կողմից չեն սահմանվել վերլուծական-հետազոտական աշխատանքների իրականացման մեթոդական ցուցումներ կամ անհատական աշխատանքների ներկայացման կարգ:

Կենտրոնի ինքնավերլուծության համաձայն՝ ուսումնառության և հետազոտական գործունեության միջև կապի բացակայությունը խնդիր է, որի լուծման համար հաստատությունը պլանավորվում է մշակել հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղություններով դեռևս քայլեր չեն իրականացվել, այս ուղղությամբ պլաններ դեռ առկա չեն:

Կրթական ծրագրերում անհատական, գործնական առաջադրանքների ցանկ առկա չէ: Դասալսումներից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ չնայած հետազոտական բաղադրիչը կրթական գործընթացում համակարգված կերպով չի կիրառվում, որոշ ծրագրերում ուսանողները կատարում են հետազոտական տարրեր պարունակող աշխատանքներ: Այսպես օրինակ, «Էլեկտրատեխնիկայի հիմունքներ» մոդուլում ուսանողները լաբորատոր պայմաններում կատարում են էլեկտրոնային տարրերի չափումներ, հաշվարկներ և վերլուծություններ: «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում» ծրագրում վթարային իրավիճակների նմանակում է իրականացվում, ինչը կարևոր է ուսանողների վերլուծական հմտությունների զարգացման համար:

Կենտրոնի լաբորատորիաներում առկա են որոշ սարքավորումներ, որոնք, չնայած իրենց բավական հին լինելուն, կարող են օգտագործվել ուսումնական գործընթացում սարքավորումների աշխատանքի սկզբունքները հասկանալու և հետազոտական առաջադրանքներ իրականացնելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ուսումնառության ընթացքում ծանոթանում են սարքավորումներին, սակայն դրանց գործնական կիրառմամբ ուսումնասիրություն անելու առաջադրանքներ չեն իրականացնում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները և կուրսային աշխատանքները հիմնականում նկարագրական բնույթ ունեն և հետազոտական տարրեր չեն պարունակում: Կան որոշ բացառություններ, օրինակ՝ «Շարժիչի կառուցվածքը» մոդուլի կուրսային աշխատանքները, որտեղ ներառված են վերլուծություններ, եզրակացություններ և գրականության ցանկ: Այսուհանդերձ, նման օրինակները դեռ սակավաթիվ են: Դիպլոմային աշխատանքներ Կենտրոնում չեն իրականացվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնի որոշ դասախոսներ կազմել են ուսումնական ձեռնարկներ, սակայն դրանք չեն անցել գրախոսություն կամ պաշտոնական

երաշխավորություն: Դրանք որպես ուսումնառության նյութ կիառվում են դասավանդման գործընթացում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ որոշ դասախոսներ դասընթացների բովանդակությունը վերանայելիս ուսումնասիրում են միջազգային փորձը՝ հետևելով ICAO, EASA և IATA կազմակերպությունների պահանջներին:

Կենտրոնում դեռևս բացակայում են դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման ընթացակարգերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնում հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականության մշակումը և ավիացիոն ոլորտում միջին մասնագիտական կրթության բնագավառում հետազոտության սահմանումը կարևոր են՝ ոլորտի մասնագիտական կրթության որակը բարելավելու և կենտրոնի մրցունակությունը բարձրացնելու համար: Այս քաղաքականությունը թույլ կտա կենտրոնին հստակեցնել հետազոտական գործունեության ուղղությունները, նպաստել ուսանողների վերլուծական և գործնական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև իրականացնել ոլորտի կարիքներին համապատասխան կիրառական ուսումնասիրություններ:

Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի պակասը և առկա աշխատանքների նկարագրական բնույթը սահմանափակում են ուսանողների վերլուծական և քննադատական մտածողության ձևավորումը: Հետազոտական տարրերի ներառումը ռեֆերատներում, կուրսային և դիպլոմային աշխատանքներում կօգնի ուսանողներին ձեռք բերել իրական խնդիրներ լուծելու հմտություններ, ինչը նրանց ավելի պատրաստված կդարձնի աշխատաշուկայի պահանջներին: Առկա հաջող օրինակների կիրառման ընդլայնումը և դրանցից որպես լավագույն փորձ օգտվելը կարող են խթանել կրթական ծրագրերի բարելավումը և ապահովել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների հետազոտական հմտությունների զարգացմանն անհրաժեշտ է աջակցել ինստիտուցիոնալ մոտեցումներով՝ հիմնված միջազգային և տեղական լավագույն փորձի վրա: Սա կնպաստի կրթական գործընթացում նորարարությունների ներառմանը և հետազոտական գործունեության կայուն զարգացմանը:

Կենտրոնի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ տրամադրում է բավարար նախադրյալներ՝ զարգացնելու դասախոսական կազմի հետազոտական ներուժը և բարելավելու կրթական ծրագրերի մրցունակությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնը չի սահմանել իր մասնագիտական գործունեության ոլորտում հետազոտության իրականացման հնարավորությունները, առկա չեն հետազոտության իրականացման մեխանիզմներ, ուսանողներին տրվող առաջադրանքներում հիմնականում սակավ է վերլուծական բաղադրիչը, Կենտրոնում ներդրված չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման

գործիքներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈՒԿ-ի համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**։

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար։

Փաստեր

ԱՈՒԿ-ը տեղակայված է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում՝ զբաղեցնելով 2699մ^2 ընդհանուր մակերեսով տարածք։ Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Կենտրոնում առկա են «Օդանավի շարժիչների և սարք-սարքավորումների» լաբորատորիա՝ հագեցած Տու-154, Յակ-42 օդանավերի և ուղաթիռի շարժիչներով և դիդակտիկ նյութերով, «Թռչող ապարատների և ավիաշարժիչների շահագործման և տեխնիկական սպասարկման» 2 լսարան-լաբորատորիա՝ հագեցած Յակ-52 օդանավի պտուտակով և օդանավերի, շարժիչների զանազան շահագործման մասերով, հանգույցներով և դիդակտիկ նյութերով, «Անօդաչու թռչող սարքերի» լսարան-արհեստանոց՝ հագեցած ինքնաթիռի վայրէջքի վարժասարքով և ապահովված անհրաժեշտ գործիքներով և պայմաններով աշխատանքներ կատարելու համար։ Կենտրոնում ուսումնական նպատակով առկա է վթարային վայրեջքների համար նախատեսված ջուր-ցամաք վարժասարք, ինչպես նաև նման իրավիճակներում օգտագործվող սարք-սարքավորումներ, պարագաներ, նյութեր և այլն, ինչպես նաև ինքնաթիռի ուղևորասրահի վարժասարք, որի միջոցով ուսանողների համար ստեղծում են տարբեր վթարային իրավիճակների նմանակումներ։ ԱՈՒԿ-ում առկա է նաև դրոնների թռիչքների ուսումնասիրման համար վարժադաշտ։ Կենտրոնն ունի նաև որոշակի սպորտային մարզագույքով կահավորված մարզասրահ։

2024 թվականին «Գերմանական միջազգային համագործակցության ընկերության» (GIZ) կազմակերպության աջակցությամբ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում օդային տրանսպորտում» կրթական ծրագրի համար Կենտրոնը ձեռք է բերել անվտանգության սպասարկման՝ անձնական իրերի, ձեռքի ուղեբեռների սկանավորման սարք՝ ուսումնական պրակտիկան անցկացնելու համար, ինչպես նաև ստեղծել է հաշվառման տաղավար՝ սարք-սարքավորումներով։ 2024 թվականից ԱՈՒԿ-ում առկա է նաև չշահագործվող Տու-134 օդանավ և դրան կցված շարժական ուղևորական սանդուղք, որը կիրառվում է բոլոր ՄԿԾ-ների շրջանակում պրակտիկաներ և գործնական պարապմունքներ իրականացնելու համար։

Կենտրոնն ունի 18 լսարան, որոնցից մեկը համակարգչային է՝ 10 համակարգիչներով։ Առկա է 10 պրոյեկտոր։ Կենտրոնում բացակայում են վիրտուալ լաբորատորիաները և կրթական ծրագրերի շրջանակներում մոդելավորման համար անհրաժեշտ ժամանակակից ծրագրային փաթեթները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար Կենտրոնն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների («Զվարթնոց» միջազգային օդանավակայան, Հայաստանի աերոնավիգացիոն ծառայություն և այլն) ռեսուրսները:

ԱՈԻԿ-ի գրադարանն ունի շուրջ 1242 միավոր գրականություն, այդ թվում՝ 1158 մասնագիտական գրականություն և 84 գեղարվեստական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում ռուսերենով է, իսկ գրադարանը թվայնացված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱՈԻԿ-ը ունի մասնագիտական միջազգային ցանցերին բաժանորդագրություն մասնագիտական գրականություն ստանալու համար, որի միջոցով պարբերաբար թարմացնում է միջազգային պահանջներին և ստանդարտներին առնչվող անգլերեն գրականությունը:

Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ Կենտրոնն իրականացրել է լսարանային ֆոնդի որոշակի վերանորոգումներ:

ԱՈԻԿ-ի եկամուտների և ծախսերի վերլուծությունը միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման շրջանակում ցույց է տալիս, որ 2023 թվականին ԱՈԻԿ-ի բյուջեի եկամուտների 62%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, իսկ 38%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: 2023 թվականի կտրվածքով ընդհանուր ծախսերի 83,7%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 4,9%-ը՝ գույքի, 4,3%-ը՝ ուսումնական նյութերի ձեռքբերմանը, 2,1%-ը՝ պրակտիկաների անցկացմանը և կոմունալ ծախսերին՝ 5%-ը:

Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր՝ Կենտրոնն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան, որն ապահովում է «Ավիառուսումնական կենտրոն» Փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր եկամուտների ծավալի 78,2%-ը:

Կենտրոնը դեռևս չի իրականացրել կրթական ծրագրերի համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսների հաշվարկ: ֆինանսական պլանավորումն ըստ ծրագրերի չի առանձնացվում: Մինչև 2022 թվականը կարճաժամկետ դասընթացներից ձևավորված ֆինանսական միջոցները ներդրվել են՝ ապահովելու միջին մասնագիտական կրթական ծրագրերի շարունակականությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումից ստացված ֆինանսական միջոցները բավարարում են կրթական ծրագրերի իրականացման համար: Ուսման վարձը մնում է անփոփոխ և չի գերազանցում 280,000 ՀՀ դրամը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ վարձը չի բարձրացվում՝ ապահովելու կրթության հասանելիությունը բոլոր ուսանողների համար:

Անդրադառնալով կենտրոնի փաստաթղթաշրջանառությանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ ԱՈԻԿ-ն արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ էլեկտրոնային փոստի միջոցով: Ներքին

փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային տարբեակով։ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ Կենտրոնում ներդրված չէ։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ԱՈՒԿ-ը չունի կենտրոնական ջեռուցման համակարգ, ջեռուցում իրականացնում են հիմնականում տեղային էլեկտրական ջեռուցիչներով կամ օդորակիչներով։ ԱՈՒԿ-ում առկա են կրակմարիչներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ։ ԱՈՒԿ մուտքն իրականացվում է հատուկ հսկվող անցակետի միջոցով, տեղադրված են ներքին և արտաքին տեսանկարահանող սարքավորումներ։ Հաստատությունում առկա է առաջին բուժօգնության համար նախատեսված բժշկական արկղիկ՝ համալրված խիստ անհրաժեշտ դեղորայքով և պարագաներով։ Ուսանողների, աշխատողների առողջության պահպանման և առաջին օգնություն ցուցաբերելու համար ԱՈՒԿ-ը օգտվում է «Ավիաբուժ» բժշկական կազմակերպությունից, որը տեղակայված է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում։ ԱՈՒԿ-ում բացակայում են թեքահարթակները։ Ներկայումս Կենտրոնը չունի Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ։

Դասալսումներից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ուսանողները մասնագիտական գործունեություն իրականացնելիս անվտանգության կանոններին հիմնականում ծանոթանում են գործատուների միջավայրում իրականացվող գործնական պարապմունքների և պրակտիկաների ընթացքում հրահանգիչների կողմից ստացած ցուցումների միջոցով։ Այնուամենայնիվ, անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորման մատյաններ կենտրոնում առկա չեն, անվտանգության կանոնները համապատասխան լսարաններում փակցված չեն։

Կենտրոնում ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցումները սկսել են իրականացվել 2024 թվականից։ Արդյունքների հիման վրա բարելավման քայլեր դեռևս առկա չեն։

Դատողություններ: Ավիաուսումնական կենտրոնի նեղ մասնագիտական ուղղվածությունն ու տեղակայությունը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ստեղծում են համագործակցության եզակի հնարավորություններ ոլորտի գործընկեր կազմակերպությունների հետ։ Այս դիրքը հնարավորություն է տալիս ուսանողներին մասնակցել ճանաչողական շրջայցերին, պրակտիկաներին և գործնական պարապմունքներին՝ օգտագործելով իրական աշխատանքային միջավայրի ռեսուրսները։ Այս գործընթացը նպաստում է ուսանողների կարողությունների զարգացմանը, ինչը ռեսուրսների լիարժեք օգտագործման դեպքում կարող է նաև մեծացնել ԱՈՒԿ-ի գրավչությունն ապագա դիմորդների համար։

Չնայած ԱՈՒԿ-ի ռեսուրսների վերջին համալրումներին, որոնք իրականացվել են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և սեփական միջոցներով, ռեսուրսների արդիականացման խնդիրը շարունակում է մնալ առաջնահերթություն։ Կենտրոնը պետք է մշտապես ուշադրություն դարձնի ռեսուրսների արդիականացմանը՝ մրցունակ կրթական միջավայր ապահովելու համար։

ԱՈՒԿ-ում առկա համակարգչային լսարանը կարևոր ռեսուրս է ուսանողների համար: Այս համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներն ունենալու դժվարության պարագայում՝ վիրտուալ լաբորատորիաների և մոդելավորման ժամանակակից ծրագրային փաթեթների ներդրումը կնպաստի դասախոսների կողմից դասավանդման նոր ուսանողակենտրոն մեթոդների կիրառմանը և ուսանողների նորարարական մտածողության զարգացմանը:

Կենտրոնի գրադարանային ֆոնդի պարբերական թարմացումը և միջազգային պարբերականների բաժանորդագրությունը դրական քայլ են, սակայն թվայնացված համակարգի բացակայությունը սահմանափակում է ուսումնական նյութերի հասանելիությունը: Գրադարանի թվայնացման և բաժանորդագրությունների ընդլայնման միջոցով Կենտրոնը կարող է էապես բարելավել իր կրթական ծառայությունների որակը և համահունչ լինել ժամանակակից կրթական պահանջներին:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ֆինանսական պլանավորումն իրականացվի ըստ հաստատության զարգացման առաջնահերթությունների ու կրթական ծրագրերի, ինչը թույլ կտա ավելի արդյունավետ բաշխել ռեսուրսները և ապահովել առաջնահերթ կարիքների համապարփակ լուծումը և կրթական ծրագրերի կայուն զարգացումը:

Դրական են ԱՈՒԿ-ի կողմից անվտանգ և ապահով միջավայրի ստեղծմանն ուղղված քայլերը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև անվտանգության կանոնների և հրահանգավորման մատյանների ու կանոնների ներդրումը, ինչը կապահովի ուսանողների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեությունը, ինչպես նաև կխթանի պատասխանատու մասնագիտական վարքագծի ձևավորումը:

Փորձագիտական խումբը նաև շեշտադրում է ռեսուրսների շարունակական գնահատման անհրաժեշտությունը՝ ավելի ճկուն արձագանքելու շահակիցների կարիքներին ու մասնագիտական պահանջների փոփոխություններին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնն ունի իր կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսներ, կիրառում է գործատուների ռեսուրսները գործնական պարապմունքների և պրակտիկաների իրականացման համար, տրամադրում է համապատասխան ֆինանսներ կրթական ծրագրերի իրականացման համար, առկա են անվտանգության պահպանման համար պայմաններ, գործում է փաստաթղթաշրջանառության իրականացման կարգ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈՒԿ-ի համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կենտրոնում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Կենտրոնի ստորաբաժանումները կիսամյակային կամ տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը Կենտրոնի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց ղեկավարին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները՝ բացառությամբ Որակի կառավարչի հաշվետվությունների, ներկայացվում են պլանների ձևաչափում առանձին սյունակով նշելով՝ «Կատարված է» կամ «Կատարված չէ»: Որակի կառավարչի հաշվետվությունները կրում են նկարագրական բնույթ իրականացված գործընթացների վերաբերյալ:

Տնօրենը հաշվետու է Ընդհանուր ժողովին, Քաղավիացիայի կոմիտեին և ԿԳՄՄՆ-ին: Տնօրենի տարեկան հաշվետվությունները չեն կազմվում բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա: Տնօրենի հաշվետվությունը համարվում է Կենտրոնի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթը: Սակայն Ընդհանուր ժողովի և Քաղավիացիայի կոմիտեի կողմից պահանջվող ձևաչափի համաձայն դրանք կենտրոնանում են ֆինանսական տվյալների վրա, ընթացիկ տարում ֆինանսական հոսքերի վերաբերյալ են՝ ներառելով քանակական տվյալներ հիմնականում որակավորման բարձրացման դասընթացների վերաբերյալ, և վերլուծություններ չեն պարունակում:

Կենտրոնում չի գործում ներքին հաշվետվողականության վերլուծման և գնահատման քաղաքականություն:

Կենտրոնում գործում է հասարակությանը տեղեկատվության հասանելիության ու թափանցիկության ապահովման համար հարթակ՝ պաշտոնական կայքէջ, որը նախատեսված է եռալեզու, սակայն տեղեկատվությունը միայն հայերեն է: Կայքէջում հիմնականում առկա են միայն նորություններ և հայտարարություններ, կրթական ծրագրերի բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն, գործող կանոնակարգեր կամ իրավական այլ ակտեր չեն հրապարակվել: Որպես տեղեկատվական հիմնական հարթակ՝ օգտագործվում է ֆեյսբուք սոցիալական ցանցը, որտեղ առկա տեղեկատվությունը հիմնականում կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ է: Գործող ֆեսյբուքյան էջի և կայքէջի վարումն իրականացնում է արտապատվիրված կազմակերպությունը (outsourcing company)՝ ստանալով տեղեկատվություն Կենտրոնի կողմից: Վերջին տարում Ուսխորհրդի կողմից բացվել է նաև ինստագրամյան էջ, որը սակայն դեռևս 21 հետևորդ ուներ փորձագիտական այցի ժամանակ:

Հասարակության հետ հետադարձ կապ ապահովող միջոցներ են ֆեյսբուքյան էջը և կայքով ուղարկվող էլեկտրոնային նամակի հնարավորությունը, որոնց միջոցով հիմնականում Կենտրոնը հարցեր է ստանում ընդունելության վերաբերյալ: Հասարակության հետ

հետադարձ կապի հաստատման համար կազմակերպվում են շրջայցեր հանրակրթական ուսումնական հաստատությունների սաների համար։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Կենտրոնի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ։ Կենտրոնում իրականացվում են վերապատրաստման, որակավորման բարձրացման դասընթացներ ինժեներատեխնիկական անձնակազմի, վերգետնյա աշխատողների, թռիչքային անձնակազմի, բորտուղեկցորդների, ՕԵԿ կարգավարների համար։ Դասընթացները կազմակերպվում են Քաղավիացիայի կոմիտեի պահանջով և կարիքներին համապատասխան։ Բացի այդ հասարակությանը գիտելիքների փոխանցման նպատակով վերջին 2 տարիներին Կենտրոնի անձնակազմից ներկայացուցիչներ այցեր են իրականացրել դպրոցներ՝ ներկայացնելով Կենտրոնի գործունեությունը և կրթական ծրագրերը։ Դրանք դեռևս պլանավորված և պարբերական բնույթ չեն կրում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կենտրոնում ձևավորված հաշվետվողականության համակարգը, այդ թվում ֆինանսական գործունեության թափանցիկության ապահովումը։ Ստորաբաժանումների կողմից բովանդակային հաշվետվությունների կազմման և տնօրենի կողմից բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա կազմված հաշվետվությունները կնպաստեն Կենտրոնի խնդիրների վերհանմանը և դրանց ուղղությամբ պլանավորման արդյունավետության բարձրացմանը։ Հաշվետվության գործող մեխանիզմները դեռևս չեն ապահովում Կենտրոնի գործունեության ողջ պատկերի մասին բավարար տեղեկատվություն հասարակության համար, ինչը կարող է խոչընդոտել թափանցիկության ապահովմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է Կենտրոնի ստեղծած հարթակները հասարակության հետ կապի և թափանցիկության ապահովման համար, իսկ դրանց ամբողջական կիրառումը կապահովի կայուն մեխանիզմների առկայություն և կնպաստի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությանը և հասարակության համար հասանելի լինելուն։

Կենտրոնը դեռևս անելիքներ ունի իր գործունեության լուսաբանման ու տեղեկատվության տարածման վերաբերյալ աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ, ինչը կարող է բարձրացնել Կենտրոնի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը հասարակության շրջանում։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կենտրոնի գործադրած ջանքերն ու իրականացրած քայլերը հասարակությանը հավելյալ գիտելիքների (արժեքների) փոխանցման ուղղությամբ։ Վերջինս կարևորվում է նաև այն հանգամանքով, որ, լինելով ոլորտում եզակի ուսումնական հաստատություն, Կենտրոնը ստանձնել է հանձնառություն ոլորտային վերապատրաստումների և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնը ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ լիազոր մարմիններին, ստեղծել է թափանցիկության ապահովման հարթակներ, կայքի և սոցիալական ցանցերի միջոցով փորձում է ապահովել հետադարձ կապը շահակիցների հետ, իրականացնում է շրջայցեր դպրոցների աշակերտների համար և կարճաժամկետ դասընթացներ ոլորտային մասնագիտական ուղղություններով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈւԿ-ի համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Ավիառուսումնական կենտրոնը շեշտադրում է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը առաջիկա երեք տարիների համար: Ըստ ԳԾ-ի և փորձագիտական հանդիպումների՝ Կենտրոնը մոտակա երեք տարիներին ակնկալում է ծառայությունների մատուցման կտրուկ աճ, որից բխելու են միջազգային ավիացիոն կազմակերպությունների կրթական չափորոշիչների և պահանջներին համապատասխան կրթական նոր ծրագրերի մշակումը և ներդրումը, ինչպես նաև ինքնաթիռի և ուղղաթիռի սիրողական օդաչուների պատրաստումը, անօդաչու թռչող սարքերի կառավարման մասնագետների պատրաստումը և միջին մասնագիտական կրթությամբ «Ինքնաթիռների և ուղղաթիռների ավիացիոն և ռադիոէլեկտրոնային սարքավորումների տեխնիկական շահագործում» կրթական ծրագրի իրականացումը:

Կենտրոնի միջին մասնագիտական կրթությամբ ուսանողների համար դեռևս բացակայում են միջազգային փորձի փոխանակման ընթացակարգերը: Այդ գործընթացները Կենտրոնը պլանավորում է իրականացնել 2025թ.-ին: Կենտրոնը պլանավորում է միջազգայնացման զարգացման ուղղությամբ համագործակցել այլ երկրների ավիացիոն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների հետ՝ միջին մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այս գործընթացները դեռևս գտնվում են նախնական պլանավորման փուլում, այս ուղղությամբ հաստատված համագործակցություններ ու հստակ ակնկալվող արդյունքներ չեն ձևավորվել:

Հաշվի առնելով Կենտրոնի համեմատաբար փոքր լինելու հանգամանքը՝ կենտրոնն առանձին պատասխանատու չունի արտաքին կապերի ու միջազգայնացման գործընթացների կառավարման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքները համակարգում է տնօրենը:

Կենտրոնն իր կրթական ծրագրերի շրջանակներում կնքել է շուրջ 20 համագործակցության պայմանագիր, ունի 10 պրակտիկայի բազա: Կենտրոնն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է ուսումնական, մասնագիտական և նախաավարտական պրակտիկաները, ինչպես նաև մասնագիտական շրջայցեր: Կենտրոնի ամենախոշոր գործատու-գործընկերներից են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, Հայաստանի աերոնավիգացիոն ծառայությունը՝ ի դեմս «ԱՐՄԱԹՍ» ընկերության, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի գրեթե բոլոր ծառայությունները և ՀՀ գործող ավիաընկերությունները: Համագործակցությունների շնորհիվ Կենտրոնը ներգրավում է նաև գործատուներին՝ համալրելով իր դասախոսական կազմը: Գործատու կազմակերպությունների ղեկավարները, նեղ մասնագիտական փորձառություն ունեցող ներկայացուցիչներն ընդգրկվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում:

Անդրադառնալով Կենտրոնի միջազգայնացմանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ Կենտրոնն իրականացնում է կրթական ծրագրերի բարելավում ICAO-ի, EASA-ի պահանջների հիման վրա: Համաձայն ICAO, EASA և IATA միջազգային ավիացիոն կազմակերպությունների պահանջների՝ Կենտրոնի համապատասխան մասնագետները մշակում և իրականացնում են ավիացիոն մասնագետների վերապատրաստման, որակավորման բարձրացման ծրագրեր, որոնք նախ հաստատում է Կենտրոնի տնօրենը, ապա համաձայնեցվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր տարի Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից Կենտրոնում իրականացվում է աուդիտ կարճաժամկետ ծրագրերն իրականացնելու թույլտվություն ստանալու համար: Խնդիրներ լինելու դեպքում Կենտրոնը կատարում է ուղղիչ գործողություններ, որից հետո ստանում թույլտվություն կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Կենտրոնի մասնագետները վերապատրաստվել են Կիևի Միջազգային քաղավիացիայի կազմակերպության ինստիտուտում՝ մասնակցելով միջազգային ավիացիոն ստանդարտներին համապատասխան դասընթացներին: Կենտրոնը համագործակցում է EASA-PILOT միջազգային կազմակերպության հետ, ինչի միջոցով հեռավար իրականացվում է գործող օդաչուների և օդային երթևեկության կարգավարների ավիացիոն անգլերենի մակարդակի թեստավորում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են «Էրազմուս+» ծրագրերի տեղեկատվական հանդիպումներին: Ներկայումս Կենտրոնը դեռ ներգրավված չէ կարողությունների զարգացման «Էրազմուս+» ծրագրերում:

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների տիրապետմանը՝ հարկ է նշել, որ Կենտրոնի ներկայացրած տվյալների համաձայն՝ դասավանդողների 37,5%-ը տիրապետում են անգլերենին, 100%-ը՝ ռուսերենին, վարչական աշխատակիցների 50%-ը՝ անգլերենին, 100%-ը՝ ռուսերենին: «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում» ՄԿԾ-ի ուսանողների 100%-ը տիրապետում են անգլերենին, 100%-ը՝ ռուսերենին, «Փոխադրումների կազմակերպում և կառավարում օդային տրանսպորտում» կրթական

ծրագրի ուսանողների 75%-ը՝ անգլերենին, 75%-ը՝ ռուսերենին, «Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում» 60%-ը՝ անգլերենին, 40%-ը՝ ռուսերենին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնը շատ կարևորում է ուսանողների շրջանում մասնագիտական օտար լեզվի իմացությունը, ինչի համար ըստ գործատուների պահանջի ավելացվել են մասնագիտական անգլերենի դասաժամերը: Անհրաժեշտ է փաստել, որ ոլորտային դասախոսների համար պարտադիր է անգլերեն լեզվի իմացությունը, իսկ մյուս դասախոսների և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ կազմակերպվել են որոշ վերապատրաստումներ. դրանք դեռևս պարբերական բնույթ չեն կրում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Կենտրոնն իրականացրել է որոշակի քայլեր արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ, ինչի արդյունքում հաստատվել են գործատուների հետ համագործակցությունները: Այս գործընթացների կանոնակարգումը, ակնկալվող արդյունքների հստակեցումը կարող է նպաստել համագործակցությունների արդյունավետության բարձրացմանը ու կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Կենտրոնը վերջին տարիներին ավելացրել է պրակտիկայի բազաները, ինչը թույլ է տալիս իրականացնել պրակտիկաները բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում՝ նպաստելով ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ կրթական ծրագրերը պարբերաբար բարելավվում են ըստ ICAO-ի և EASA-ի պահանջների, սակայն մտահոգիչ է, որ յուրաքանչյուր դասախոս ինքն է վերանայում մոդուլը, չկան կանոնակարգված մեխանիզմներ, քննարկումներ, ինչը կարող էր նպաստել կրթական ծրագրի իրականացման տրամաբանության պահպանմանը և շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ըստ ICAO, EASA և IATA միջազգային ավիացիոն կազմակերպությունների պահանջների, Կենտրոնի համապատասխան մասնագետները մշակում և իրականացնում են ավիացիոն մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր: Այս համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ միջազգային կրթական հաստատությունների հետ համագործակցությունները զարգացնելը կնպաստի Կենտրոնի միջազգայնացմանն ու արտաքին կապերի ընդլայնմանը: Այս քայլերը հնարավորություն կտան ապահովել համահունչություն համանման կրթական ծրագրերի հետ, ինչպես նաև կնպաստեն դասախոսների և ուսանողների շարժունության իրականացմանը, ինչն իր հերթին դրական ազդեցություն կունենա Կենտրոնի վարկանիշի բարձրացման վրա:

Դրական է, որ Կենտրոնը կարևորում է ուսանողների շրջանում անգլերենի իմացության մակարդակի բարձրացումը, որն ուսանողներին մասնագիտական առավելություն է տալիս աշխատանքի ընդունվելիս: Խումբը նաև գտնում է, որ

դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմերի անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացումը կնպաստի միջազգային փորձի ուսումնասիրման հնարավորությունների ստեղծմանը և դրամաշնորհային ծրագրերին մասնակցությանը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ Կենտրոնը համագործակցում է տեղական կազմակերպությունների ու գործատուների հետ, իրականացնում գործնական պարապմունքներ ու պրակտիկաներ գործատուների միջավայրում, կրթական ծրագրերը բարելավելիս հաշվի է առնում ICAO, EASA պահանջներն ու չափանիշները, քայլեր ձեռնարկում ապահովելու ուսանողների՝ մասնագիտական օտար լեզվի իմացության բավարար աստիճան՝ փորձագիտական խումբը գտնում է Կենտրոնը բավարում է չափանիշ 9-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈՒԿ-ի համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Կենտրոնում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2015թ.-ից։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս նպատակով Կենտրոնում 2024թ.-ին մշակվել է Որակի ձեռնարկը, որը սահմանում է որակի քաղաքականությունը, որակի ապահովման համակարգի նպատակներն ու խնդիրները, որակն ապահովող ընթացակարգեր/ծրագրերը։ Որակի քաղաքականությունը միտում ունի Կենտրոնի գործունեության ոլորտում սահմանել և պահպանել, անհրաժեշտության դեպքում բարձրացնել որակի մակարդակը կիրառվող բոլոր գործընթացներում և նվազագույն սանդղակին մոտեցնել ռիսկի գործոնը։

Որակի ապահովման պատասխանատուի տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են ուսումնական գործընթացի ստուգումների, վերստուգումների, աշխատանքների վերահսկման և դասալսումների վրա։ Գործառույթների առանցքում կարիքների վերհանումն ու դրանց ուղղությամբ քայլերի իրականացումը դրված չէ։ Շահակիցների կարիքների վերհանումը և տվյալների հավաքագրումը կանոնակարգված ձևով չի իրականացվում։ Այլ ստորաբաժանումների կամ պատասխանատուների հետ միասին տվյալների հավաքագրում և կարիքների վերհանման հետազոտություններ չեն իրականացվում։ Որակի ապահովման աշխատանքներում այլ աշխատակիցներ ներգրավված չեն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման կառավարչի համար Կենտրոնը հատկացրել է 1 դրույք հաստիք: Հաստատված է պաշտոնի անձնագիր որակի կառավարչի համար: Հատկացված են առանձին աշխատասենյակ և տեխնիկական միջոցներ կառավարչի աշխատանքներն իրականացնելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնի որակի կառավարչի կողմից 2023թ.-ին մշակվել են հարցաթերթիկներ, և 2024թ.-ից սկսել են իրականացվել հարցումներ ուսանողների շրջանում՝ գնահատելու Կենտրոնի գործունեության արդյունավետությունը, վերհանելու ռեսուրսներից, դասախոսներից և կուրսղեկներից բավարարվածության վերաբերյալ կարիքները: Նախորդ տարիներին հարցումների անցկացման փորձ Կենտրոնը չունի: Կարիքների վերհանման այլ հետազոտություններ չեն իրականացվում:

Համադրելով Կենտրոնի կողմից իրականացվող հարցումները որակի քաղաքականությամբ սահմանված նպատակներին՝ կարելի է նշել, որ դրանք միտված են Որակի ձեռնարկում սահմանված նպատակներին, սակայն դեռևս միայն ուսանողների շրջանում են անցկացվում: Դրանք առավելապես միտված են ուսանողների բավարարվածության գնահատմանը, կենտրոնում կարիքների վերհանումը դեռևս պարբերական ու թիրախային կերպով չի իրականացվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները դեռևս ամբողջական խորը վերլուծությունների չեն ենթարկվել: Ներկայացված վերլուծությունները ընդհանուր ձևակերպումներով են, այնինչ հարցաթերթիկների մեջ ուսանողները տարբեր խնդիրներ էին բարձրացրել, այդ թվում՝ պրակտիկաների, դասապրոցեսի կազմակերպման, ջեռուցման համակարգի, տեսախցիկների տեղադրման և այլնի վերաբերյալ, որոնք դուրս էին մնացել վերլուծության առանցքից: Այնուամենայնիվ, հարցումների արդյունքները քննարկվել են ղեկավար կազմի հետ: Կարիքներ վերհանելու նպատակով Կենտրոնի ղեկավար կազմը մշտապես ընթացիկ հանդիպումներ է ունենում գործատուների հետ, սակայն դրանք հստակ պլանավորված և փաստաթղթավորված չեն:

Որակի ապահովման համակարգը Կենտրոնում նոր է ձևավորվում: Գործընթացները գտնվում են պլանավորման և մասամբ իրականացման փուլերում: Համակարգի վերանայման մեխանիզմներ դեռևս չեն մշակվել:

Անդրադառնալով Կենտրոնի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում չեն ներկայացվել անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնի որակի ապահովման կառավարչի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ԻՎ-ն, այսուհանդերձ, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքներն ամբողջությամբ արտացոլված չեն ԻՎ-ում, շահակիցները չեն ունեցել նաև անմիջական մասնակցություն ԻՎ աշխատանքներում: Կենտրոնում կատարվող որակական ուսումնասիրությունների, ԻՎ

հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ կայքէջում, սակայն ապագայում Կենտրոնը նախատեսում է համալրել այն իրականացված աուդիտների և վերլուծությունների արդյունքներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով 2024թ.-ին Կենտրոնի կողմից համապատասխան փաստաթղթային բազայի մշակումը, այդ թվում՝ Որակի ձեռնարկի կազմումը, որը անհրաժեշտ հիմքեր է ստեղծում որակի համակարգի ձևավորման համար: Սակայն որակի քաղաքականությամբ սահմանված նպատակների ուղղությամբ կատարված աշխատանքները դեռևս շոշափելի արդյունքներ չեն գրանցել:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ որակի կառավարչի պլանավորած աշխատանքները կենտրոնանում են հիմնականում ուսումնական գործընթացի ստուգումների, վերստուգումների և աշխատանքների վերահսկման վրա՝ արդյունքում պակաս արժևորելով բոլոր շահակիցների կարիքների վերհանումն ու որակական տվյալների հավաքագրումը, ինչը հիմք պետք է հանդիսանար բարելավման գործընթացների համար: Նման միտումը կարող է խոչընդոտել որակի քաղաքականությամբ սահմանված նպատակների իրականացմանը և Կենտրոնում որակի համակարգի արդյունավետ ձևավորմանը:

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում որակի գործընթացներում որակի կառավարչից բացի այլ աշխատակիցների ներգրավման բացակայությունը, ինչը կարող է վտանգել որակի մշակույթի ձևավորմանը և տարածմանը շահակիցների շրջանում:

Փորձագիտական խումբը գնահատում է Կենտրոնի ջանքերը որակի կառավարչի աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ և կարևորում է ուսանողների կարիքների վերհանման նպատակով 2024թ.-ից մեկնարկած հարցումները: Միևնույն ժամանակ փորձագիտական խմբի գնահատմամբ դեռևս միայն ուսանողների շրջանում անցկացվող հարցումները չեն ապահովում ներքին և արտաքին շահակիցների կարիքների ամբողջական վերհանումը: Ավելին, անցկացված հարցումների արդյունքները կարիք ունեն ամբողջական խորը վերլուծությունների, ինչը կապահովի խնդիրների վերհանումը և դրանց ուղղությամբ թիրախային բարելավման քայլերի իրականացումը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ Կենտրոնում դեռ չի ձևավորվել ինքնավերլուծության իրականացման մշակույթ, որը կապահովեր անհրաժեշտ հիմքեր և վերլուծություններ արտաքին գնահատման համար, ինչը պայմանավորված է նաև փորձի պակասով:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնի կողմից իրականացված որակի ապահովման գործընթացների ու արդյունքների թափանցիկության ապահովումը կարող է նպաստել համակարգում շահակիցների անմիջական ներգրավմանը և գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կենտրոնում որակի ապահովման համակարգը դեռ նոր է ձևավորվում, իրականացվող գործընթացները չեն նպաստել շահակիցների կարիքների ամբողջական վերհանմանը, ոչ բոլոր շահակիցների կարիքներն են ուսումնասիրվում, տվյալների հավաքագրման հստակ ու պարբերական մեխանիզմներ Կենտրոնում ներդրված չեն, արտաքին գնահատման համար բավարար վերլուծական հիմքեր Կենտրոնի կողմից չեն հավաքագրվել, Կենտրոնը դեռևս չի ապահովում իրականացված որակի ապահովման գործընթացների ու արդյունքների թափանցիկությունը շահակիցների շրջանում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՈւԿ-ի համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**։

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Գագիկ Քթրյան
Փորձագիտական խմբի ղեկավար

20-ը փետրվարի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գագիկ Քթրյան՝ 2005 թ. ավարտել է ԵՊՀ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի բակալավրիատը, 2007 թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2010 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008–2012 թթ. աշխատել է ԵՊՀ-ում՝ որպես կրտսեր գիտաշխատող, 2012–2015 թթ.՝ դասախոս: 2008–2020թթ. դասավանդել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում՝ միաժամանակ ղեկավարելով Որակի ապահովման կենտրոնը (2012–2015 թթ.):

2015–2018 թթ. զբաղեցրել է ՀՀ ՊՆ ռազմական ավիացիոն համալսարանի որակի ապահովման և վերլուծության բաժանմունքի, այնուհետև՝ բաժնի ղեկավարի պաշտոնը: 2018–2021 թթ. եղել է ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության բաժնի պետ–վարչության պետի տեղակալ:

2021–2023 թթ. եղել է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի տեղակալ, 2023թ.՝ նախագահի պարտականությունները կատարող:

2015 թ.-ից ներգրավված է ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական կրթության հաստատությունների հավատարմագրման գործընթացներում՝ որպես փորձագետ:

2022 թ.-ից դասավանդում է Հայաստանի եվրոպական համալսարանում:

2024 թ.-ի օգոստոսից ղեկավարում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Որակի ապահովման բաժինը:

Օլեգ Գևորգյան՝ 2007 թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) Էլեկտրատեխնիկական ֆակուլտետի «Էլեկտրական տրանսպորտ» ծրագիրը՝ ստանալով դիպլոմավորված ճարտարագետի որակավորում: 2012 թ. դարձել է տեխնիկական գիտությունների թեկնածու, 2015թ.՝ դոցենտ:

2007–2010 թթ. եղել է ՀՊՃՀ Կիբեռնետիկայի դեպարտամենտի կրտսեր գիտաշխատող, իսկ 2010–201 5թթ. աշխատել է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում:

2015–2022 թթ. զբաղեցրել է տարբեր պաշտոններ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում՝ ներառյալ առաջատար և գլխավոր մասնագետի պաշտոնները:

2016–2022 թթ. եղել է ՀԱՊՀ «Էլեկտրոնային տեխնիկա» ամբիոնի դոցենտ, իսկ 2022 թ.-ից մինչ օրս՝ «Էլեկտրոնիկա, կեսաբժշկանակ և չափիչ համակարգեր» ամբիոնի դոցենտ: Նույն թվականից նաև աշխատում է որպես ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի Գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ:

Գայանե Համբարձումյան՝ 2010 թ. ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրիատը, 2012 թ.՝ մագիստրատուրան:

2010 թ.-ից աշխատում է Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում: 2014-2016 թթ. եղել է Աղավնատան Ղուկաս Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցի համակարգչային օպերատոր:

2014-2023 թթ. հանդիսացել է Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ամբիոնի վարիչը: 2023 թ.-ից նույն քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է:

Զարուհի Հակոբյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող է: 2024 թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	**04.12.2024 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ստորաբաժանումների (Ուսումնական մաս, Ընդհանուր բաժին, Գրադարան, Հաշվապահություն) ղեկավարների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:20	13:20	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ	13:30	14:20	50 րոպե
6.	Հանդիպում Ընդհանուր ժողովի անդամների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

N.	**05.12.2024 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե

6.	Զուգահեռ հանդիպում **«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում/ըստ տրանսպորտի տեսակների/»** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում **«Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում»** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում **«Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկակկան շահագործում»** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում **«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում/ըստ տրանսպորտի տեսակների/»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում **«Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում **«Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկակկան շահագործում»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Զուգահեռ հանդիպում **« Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում/ըստ տրանսպորտի տեսակների/»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում **«Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում»** մասնագիտության կրթական ծրագրի	Զուգահեռ հանդիպում **«Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկակկան շահագործում»** մասնագիտությ	16:30	17:20	50 րոպե

		ուսանողների հետ	ան կրթական ծրագրի ուսանողների հետ			
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:30	18:00	30 րոպե

N.	06.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Բաց հանդիպում	10:30	11:30	60 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:40	12:30	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	13:40	14:30	50 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:40	17:30	110 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Կենտրոնի կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	2
2.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ	2
3.	Ստորաբաժանումների կարճաժամկետ ծրագրեր	2
4.	Ընդհանուր ժողովի կանոնակարգ, նիստերի արձանագրություններ	2
5.	Քոլեջի կողմից հավաքագրված տվյալների վերլուծություններ	2
6.	Ներքին և արտաքին աուդիտի հիմքեր	2
7.	Խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
8.	Հաստիքացուցակ	2
9.	Բյուջե վերջին երկու տարիների համար	2
10.	Պաշտոնների անձնագրեր	2
11.	Գործատուների հետ ՄԿԾ վերաբերյալ քննարկումների արձանագրություններ	3
12.	Քոլեջի կողմից կազմված կրթական չափորոշիչներ	3
13.	Մատյաններ	3
14.	Պրակտիկայի թղթապանակներ	3
15.	Պետական ամփոփիչ ատեստավորման տոմսեր Քննական տոմսեր	3
16.	Պետական քննությունների արդյունքում հանձնաժողովների նախագահների ներկայացրած առաջարկություններ և դիտողություններ	3
17.	Ուսանողական թղթապանակներ	3
18.	Ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ	3
19.	2024-2025 ուստարում ուսանողների թիվ	4
20.	Հեռացված և վերականգնված ուսանողների տոկոս	4
21.	Կուրսղեկների աշխատանքային պլաններ	4
22.	Շրջանավարտների բազա	4
23.	Ուսանողների հետազոտական աշխատանքների օրինակներ	4

24.	Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ցանկ և պաշտոնների նկարագրեր	5
25.	Տարիֆիկացիա Դասախոսների ծանրաբեռնվածությունը՝ ըստ մոդուլների /Դասաբաշխում/	5
26.	Մրցույթով ընդունված դասախոսների ցանկ	5
27.	Դասախոսների շարժ վերջին հինգ տարիների համար	5
28.	Դասախոսական կազմի կատարելագործման, որակավորման բարձրացման պլան-ժամանակացույց	5
29.	Ստաժավորման հիմքեր	5
30.	Դասախոսների որակավորման բարձրացման տարեկան գրաֆիկ և հիմքեր, վերապատրաստման ծրագիր	5
31.	Դասալսումների թերթիկներ և վերլուծություններ	5
32.	Վերջին 5 տարիներին մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսների ցանկ	5
33.	Դասախոսական կազմի միջին տարիք	5
34.	Դասախոսական կազմի խրախուսման չափանիշներ, խրախուսման հիմքեր	5
35.	Դասախոսական կազմի կողմից կատարված հետազոտությունների ցանկ	6
36.	Գրադարանային ֆոնդի վերաբերյալ տվյալներ, համալրման հիմքեր	7
37.	Նախահաշիվ և բյուջե վերջին երկու տարիների համար	7
38.	Կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացների ցանկ, իրականացման ժամանակացույց, ֆինանսական մուտքեր վերջին երեք տարիների համար	7
39.	Գնումների պլան	7
40.	Ֆինանսական հաշվետվություններ	7
41.	Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցումների վերլուծություններ	7

42.	Լիազոր մարմիններին ներկայացված հաշվետվություններ վերջին երեք տարիների համար	8
43.	Կայքի և սոցիալական ցանցերի դիտելիության հիմքեր	8
44.	Համագործակցության հուշագրերի ցանկ և հուշագրեր	9
45.	Պրակտիկաների պայմանագրերի ցանկ և հուշագրեր	9
46.	Կարիքների վերհանման հարցումների ցանկ	10
47.	Հարցաթերթիկներ	10
48.	Կարիքների վերհանման վերլուծություն	10
49.	Որակի ապահովման պատասխանատուի աշխատանքային պլան	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. լաբորատորիաներ,
3. դրոնների թռիչքների ուսումնասիրման վարժադաշտ,
4. ստորաբաժանումներ,
5. համակարգչային լսարաններ,
6. մարզադասրահ,
7. գրադարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաստատում եմ
ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
Նախագահ՝
Տ. Ռևազյան
«19» 02 2020թ.

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ կառավարման կազմակերպական կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՈՒԿ - Ավիաուսումնական կենտրոն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄԿՈՒԶԱԿ - Մասնագիտական կրթության ու ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ - ուսումնաօժանդակ կազմ

ՕԵԿ - օդային երթևեկության կառավարում

EASA (European Union Aviation Safety Agency) - Եվրոպական Միության ավիացիոն անվտանգության գործակալություն

IATA (International Air Transport Association) - Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիա

ICAO (International Civil Aviation Organization) - Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն